ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

2023

YOUTH INITIATIVE CENTRE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT

3 Մեր մասին
About us

4 1 Ռազմավարական նպատակ
Strategic aim

5 «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Gyumri Youth House” Open Youth Centre

7 «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Spitak Youth House” Open Youth Centre

9 «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Armavir Youth House” Open Youth Centre

11 «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Ejmiatsin Youth House” Open Youth Centre

13 «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Gavar Youth House” Open Youth Centre

15 «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Artik Youth House” Open Youth Centre

16 «ԲայքԼայֆ» սոցիալական ձեռնարկատիրություն
"BikeLife" social entrepreneurship

17 Արշավներ ԵՆԿ-ի հետ
Hikings with YIC

18 Ակումբներ
Clubs

19 ԵՆԿ շարժունակության ծրագրեր
YIC Mobility Projects

20 ԵՄ-Ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության.
Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի
EU4Gender Equality: Together Against Gedner Stereotypes and Gender-based Violence

21 Երիտասարնդերը հանուն բարենպաստ կլիմայի
Adolescents for Climate Actions in Communities

23 Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժածերիտասարդների հետ
Youth Work for Rehabilitation of Young People Affected by War and Armed Conflicts

25 «Քայլ առաջ՝ դեպի կոնֆլիկտների կառավարում» միջազգային դասընթաց
“Step Forward to Conflict Management" International Training Course

26 2 Ռազմավարական նպատակ
Strategic aim

27 «UPSHIFT Սյունիք» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագիր
“UPSHIFT SYUNIK” Cultivating Adolescents Growth and Engagement in Community Development project

28 ԵՀԿ Հյուրընկալում
ESC hosting

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT

30 ԵՀԿ Ուղարկում
ESC sending

34 «Մարդասիրական կամավորություն»
“Humanitarian Aid Volunteering”

35 «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց 3»
“EU4Youth Alumni Network 3”

36 Աշխատանքային և ուսումնական պրակտիկա
Work and study internship

37 «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր
Youth in Action: Youth Empowerment and Leadership Development in Armenia

40 Կամավորների միջազգային օր 2023
International Volunteer Day 2023

41 «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոն Հայաստանում
“Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia”

42 «Եվրոպան տեղայնացվում է»
“Europe Goes Local”

43 «Եվրոպան տեղայնացվում է.
Մենթորության ծրագիր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի համար»
“Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova”

44 «Էրազմուս+» դասընթաց նորեկների համար
“Erasmus+ training for newcomers”

45 ԵՀԿ համակարգողների հանդիպում
Meeting of ESC Coordinators

46 Ուսումնական այց Հայաստանում
Study visit to Armenia

47 «Խաղաղության կորպուս»
“Peace Corps”

49 «Խոսում են երիտասարդները» մեդիա նախագիծ
“Have Your Say” youth media programme

50 Երիտասարդական աշխատողների և տեղական կազմակերպությունների հիմնարար հմտությունների զարգացում
Capacity Building of Community Youth Workers and Local NGOs in essential Life-Saving Skills

52 «Կյանքը շարժունակության ծրագրերից հետո» միջազգային դասընթաց
"Life After Mobility Projects" International Training Course

53 «Մենթորության արվեստը» ԵՀԿ մենթորների վերապատրաստման միջազգային դասընթաց
“The Art of Mentoring” International Training Course for ESC Mentors

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT

54 «Երիտասարդական ոլորտում միջոլորտային համագործակցության խթանում» միջազգային ուսումնական այց Հայաստանում
“Supporting of cross-sectorial cooperation in youth field” International study visit in Armenia

55 ԵՀԿ կամավորների տարեկան գնահատման հանդիպում
ESC Annual Volunteering Event

56 Երիտասարդության միջազգային օր 2023
International Youth Day 2023

ՄԵՐ ՄԱՍԻՆ
ABOUT US

«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպությունը հիմվել է 2008 թվականին Գյումրիում՝ գործունեության հիմքում ունենալով երիտասարդական նախաձեռնությունների ակտիվ մասնակցության խրախուսման միջոցով երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացման համայնքի զարգացման գաղափարը:

"Youth Initiative Centre" (YIC) NGO was founded in 2008 in Gyumri, based on the idea of increasing youth civic activism and community development by promoting youth initiatives and active participation

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄՐՑՈՒՆԱԿ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՀԱՏ ՔԱՂԱՔԱՑԻ:

OUR VISION

VALUE GENERATING YOUTH

OUR MISSION

TO PROMOTE THE DEVELOPMENT OF THE YOUNG PERSON AS A COMPETITIVE, INITIATIVE TAKING, RESPONSIBLE INDIVIDUAL AND A CITIZEN.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1
STRATEGIC AIM

ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՊԱԳԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

CONTRIBUTE TO YOUTH FOR THE FUTURE CONCERNING THE FORMATION OF FAITH

ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Աջակցել երիտասարդի հոգեկան ֆիզիկական առողջության պահպանմանը:
1.2. Ընդլայնել երիտասարդի ինքնադրսևորման և ինքնաիրացման հնարավորությունները:
1.3. Խթանել երիտասարդների շրջանում միջմշակութային ուսուցումն ու երկխոսությունը:

OBJECTIVES

1.1. To support the mental and physical health of the young person.
1.2. To expand the opportunities for self-expression and self-realization of the young person.
1.3. To promote intercultural education and dialogue among young people.

«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Gyumri Youth House” Open Youth Centre

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի նպատակն է բարձրացնել Հայաստանում՝ մասնավորապես Գյումրի համայնքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող առաջին երիտասարդական կենտրոնն է Հայաստանում, որը ներդրվել է 2018 թ. Գյումրի համայնքում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Գյումրու համայնքապետարանի և Եվրոպական միության աջակցությամբ:
Կենտրոնը 2023 թ. ընթացքում ծառայություններ է մատուցել Գյումրու և հարակից համայնքների 13-18 տարեկան 882 երիտասարդների, որից 473-ը՝ աղջիկ, 409-ը՝ տղա:

Գործունեության ուղղություններ՝

- Քաղաքացիական կրթություն,
- Կյանքի հիմնարար հմտություններ,
- Մասնագիտական կոմնորոշում,
- Առողջ ապրելակերպ,
- Առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- Բովանդակալից ժամանց:

Տրամադրված ծառայություններ՝

- Կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- Տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնաճանաչողական այցեր,
- Էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- Ժամանցային և հանրային միջոցառումներ,
- Անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- Շարժական երիտասարդական աշխատանք:

When: January - December 2023

Where: Gyumri, Armenia

Aim: "Gyumri Youth House" open youth centre aims to enhance civic activity and wellbeing of adolescents and youngsters aged 13-18 in Armenia, particularly in Gyumri community through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: "Gyumri Youth House" open youth centre is the first youth centre in Armenia to work with methodology and based on principles of open youth work, which was founded in 2018 in Gyumri community by the "Youth Initiative Centre" NGO, with the support of the Gyumri Municipality and EU.

During 2023 the centre provided services to 882 youngsters aged 13-18 from Gyumri and neighboring communities (473 girls and 409 boys).

DIRECTIONS OF THE ACTIVITIES:

- Civic education,
- Basic life skills,
- Professional orientation,
- Healthy lifestyle,
- Leadership and initiative,
- Meaningful entertainment.

SERVICES PROVIDED:

- Educational clubs, workshops and trainings,
- Information exchange and consultation,
- Educational visits,
- Excursions, hikings and camps,
- Fun and informal activities,
- Entertainment and public events,
- Individual or group youth work,
- Mobile youth work.

Կենտրոնի կողմից իրականացվել են՝

- **896** ժամ անհատական և խմբային երիտասարդական աշխատանք,
- **20** թեմատիկ շաբաթ,
- **22** թեմատիկ միջոցառումներ, **15**-ը կենտրոնի տարածքում, **7**-ը՝ հանրային,
- **10** հատուկ հյուրերի հյուրընկալում,
- **60** թեմատիկ աշխատարան՝ **100** ժամ տևողությամբ,
- **8** ուսումնական այց տարբեր կրթական և մշակութային կառույցներ՝ ճանաչողական և մասնագիտական կողմնորոշման նպատակով,
- **13** կրթական, զարգացման ակումբներ (ընդհանուր **169** ժամ), որոնք վարել են տեղացի և միջազգային կամավորներ,
- **18** ֆիլմի դիտում-քննարկում,
- **1** քայլարշավ և **1** էքսկուրսիա **33** երիտասարդների մասնակցությամբ,
- **30** ժամ աութրիչ աշխատանք Գյումրու **30** ուսումնական հաստատություններում,
- **36** ժամ շարժական երիտասարդական աշխատանք Գյումրի համայնքի **22** ուսումնական հաստատություններում,
- Կենտրոնի սաների կողմից իրականացվել են **6** նախաձեռնություններ,
- Կենտրոնից **10** երիտասարդներ Աղվերանում մասնակցել են «Երիտասարդների առաջնորդության և քաղաքացիական կրթության» 5-օրյա ճամբարին,
- Ամառային բակային ճամբար (մեկ շաբաթ), որին մասնակցել են Գյումրի համայնքում բնակվող 10-12 տարեկան **24** պատանի, իսկ կենտրոնի 13-18 տարեկան սաներից **10**-ը կամավորական աշխատանք են կատարել բակային ճամբարում՝ որպես ջոկատավարներ և կազմակերպչական հարցերի պատասխանատուներ:
- Երիտասարդական աշխատանքի ոլորտում կարողությունների զարգացման նպատակով կենտրոնի համակարգողը և երկու երիտասարդական աշխատողները մասնակցել են տեղական և միջազգային վերապատրաստումների, ընդհանուր՝ **310** ժամ տևողությամբ:
- Կարողությունների զարգացման նպատակով կենտրոնում կամավոր աշխատանքային փորձաշրջան են անցել գրասենյակային աշխատանքի **2** փորձնակներ:
- Կենտրոնում կամավորական աշխատանք են իրականացրել
- **10** տեղացի և **5** միջազգային կամավորներ:
- Տարբեր շահագրգիռ խմբերի (ոլորտի միջազգային մասնագետներ, ուսանողներ, սկսնակ երիտասարդական աշխատողներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ) **12** ճանաչողական այցեր կենտրոն՝ բաց երիտասարդական աշխատանքի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և կենտրոնի գործունեության տեսանելիությունը բարձրացնելու նպատակով,
- Համայնքում բաց երիտասարդական աշխատանքի և կենտրոնի գործունեության մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է
- «Թեյախմություն», որին մասնակցել են Գյումրի քաղաքի **20** դպրոցների և քոլեջների կազմակերպչական հարցերի գծով **20** փոխտնօրեններ և կարիերայի պատասխանատուներ:

The Centre implemented:

- **896** hours of individual and group youth work,
- **20** thematic weeks,
- **22** events, **15** of which in the centre, and **7** - in public,
- Meetings with **10** special guests,
- **60** thematic workshops with a duration of **100** hours,
- **8** study visits to various educational and cultural institutions for professional orientation,
- **13** educational and development clubs conducted by local and international volunteers,
- **18** movie screenings and discussions,
- 1 hiking and **1** excursion with the participation of **33** youngsters,
- **30** hours of outreach work in **30** educational institutions of Gyumri community,
- **36** hours of mobile youth work in **22** educational institutions of Gyumri community,
- **6** initiatives were implemented by the youngsters of the centre, **10** beneficiaries of the centre participated in the 5-day "Youth
- Leadership and Civic Education" camp in Aghveran,
- Summer day-camp (one week), which was attended by **24** teenagers aged 10-12 living in Gyumri, and **10** beneficiaries of the centre aged 13-18 volunteered in the day-camp as counselors and organizational team members,
- The coordinator and two youth workers of the centre participated in **310** hours of local and international projects for the purpose of capacity development and qualification in the youth work,
- **2** interns passed a working internship in administrative work,
- **10** local and **5** international volunteers volunteered at the centre,
- **12** study visits of various interested groups (international specialists in the field, students, youth workers, representatives of NGOs) to the centre aimed to raise awareness about open youth work and increase the visibility of the centres' activities,
- 1 meeting - "Teadrinking" aimed to increase the level of awareness in the community about open youth work and the activities of the centre, in which **20** deputy directors and career officers in charge of organizational issues participated from **20** schools and colleges in Gyumri.

«Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Spitak Youth House” Open Youth Centre

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Սպիտակ, Հայաստան

Նպատակ. «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի նպատակն է բարձրացնել Հայաստանում՝ մասնավորապես Սպիտակ համայնքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող երկրորդ երիտասարդական կենտրոնն է Հայաստանում, որը ներդրվել է 2020թ. Սպիտակ համայնքում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Սպիտակի համայնքապետարանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Կենտրոնը 2023թ. ընթացքում ծառայություններ է մատուցել Սպիտակի և հարակից համայնքների 13-18 տարեկան 534 երիտասարդների, որից 262-ը՝ աղջիկ, 272-ը՝ տղա:

Գործունեության ուղղություններ՝
- Քաղաքացիական կրթություն,
- Կյանքի հիմնարար հմտություններ,
- Մասնագիտական կոմնորոշում,
- Առողջ ապրելակերպ,
- Առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- Բովանդակալից ժամանց:

Տրամադրված ծառայություններ՝
- Կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- Տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնաճանաչողական այցեր,
- Էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- Ժամանցային և հանրային միջոցառումներ,
- Անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- Շարժական երիտասարդական աշխատանք:

When: January - December 2023

Where: Spitak, Armenia

Aim: "Spitak Youth House" open youth centre aims to enhance civic activity and wellbeing of adolescents and youngsters aged 13-18 in Armenia, particularly in Spitak community through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: "Spitak Youth House" open youth centre is the second youth centre in Armenia to work with methodology and based on principles of open youth work, which was founded in 2020 in Spitak community by the "Youth Initiative Centre" NGO, with the support of the Spitak Municipality and UNICEF.

During 2023 the centre provided services to 534 youngsters aged 13-18 from Spitak and neighboring communities (262 girls and 272 boys).

DIRECTIONS OF THE ACTIVITIES:
- Civic education,
- Basic life skills,
- Professional orientation,
- Healthy lifestyle,
- Leadership and initiative,
- Meaningful entertainment.

SERVICES PROVIDED:
- Educational clubs, workshops and trainings,
- Information exchange and consultation,
- Educational visits,
- Excursions, hikings and camps,
- Fun and informal activities,
- Entertainment and public events,
- Individual or group youth work,
- Mobile youth work.

Կենտրոնի կողմից իրականացվել են՝

- **912** ժամ անհատական և խմբային երիտասարդական աշխատանք,
- **20** թեմատիկ շաբաթ,
- **13** թեմատիկ միջոցառումներ, **10**-ը կենտրոնի տարածքում, **3**-ը՝ հանրային,
- **11** հատուկ հյուրերի հյուրընկալում,
- **58** թեմատիկ աշխատարան՝ **111** ժամ տևողությամբ,
- **12** ուսումնական այց տարբեր կրթական և մշակութային կառույցներ՝ ճանաչողական և մասնագիտական կողմնորոշման նպատակով,
- **9** կրթական, զարգացման ակումբներ (ընդհանուր **187** ժամ), որոնք վարել են տեղացի և միջազգային կամավորներ,
- **20** ֆիլմի դիտում-քննարկում,
- **3** արշավ, **2** քայլարշավ **62** երիտասարդների մասնակցությամբ,
- **21** ժամ աութրիչ աշխատանք Սպիտակի և հարակից գյուղերի **16** ուսումնական հաստատություններում,
- **56** ժամ շարժական երիտասարդական աշխատանք,
  Կենտրոնի սաների կողմից իրականացվել են **12** նախաձեռնություններ,
  Կենտրոնից **10** երիտասարդներ Աղվերանում մասնակցել են «Երիտասարդների առաջնորդության և քաղաքացիական կրթության» 5-օրյա ճամբարին,
- Ամառային բակային ճամբար (մեկ շաբաթ), որին մասնակցել են Սպիտակ համայնքում բնակվող 10-12 տարեկան **25** պատանի, իսկ կենտրոնի 13-18 տարեկան սաներից **8**-ը կամավորական աշխատանք են կատարել բակային ճամբարում՝ որպես ջոկատավարներ և կազմակերպչական հարցերի պատասխանատուներ:
- Երիտասարդական աշխատանքի ոլորտում կարողությունների զարգացման նպատակով կենտրոնի համակարգողը և երկու երիտասարդական աշխատողները մասնակցել են տեղական և միջազգային վերապատ-պատրաստումների, ընդհանուր՝ **357** ժամ տևողությամբ:
- Կարողությունների զարգացման նպատակով կենտրոնում կամավոր աշխատանքային փորձաշրջան են անցել գրասենյակային աշխատանքի **3** փորձնակներ:
- Կենտրոնում կամավորական աշխատանք են իրականացրել **6** տեղացի և **1** միջազգային կամավորներ:

The Centre implemented:

- **912** hours of individual and group youth work,
- **20** thematic weeks,
- **13** events, **10** of which in the centre, and **3** - in public,
- Meetings with **11** special guests,
- **58** thematic workshops with a duration of **111** hours,
- **12** study visits to various educational and cultural institutions for professional orientation,
- **9** educational and development clubs (**187** hours in total) conducted by local and international volunteers,
- **20** movie screenings and discussions,
- **3** excursion and **2** hikings with the participation of **62** youngsters,
- **21** hours of outreach work in **16** educational institutions of Spitak community,
- **56** hours of mobile youth,
- **12** initiatives were implemented by the youngsters of the centre, **10** beneficiaries of the centre participated in the 5-day "Youth
- Leadership and Civic Education" camp in Aghveran,
- Summer day-camp (one week), which was attended by **25** teenagers aged 10-12 living in Spitak, and **8** beneficiaries of the centre aged 13-18 volunteered in the day-camp as counselors and organizational team members,
- The coordinator and two youth workers of the centre participated in **357** hours of local and international projects for the purpose of capacity development and qualification in the youth work,
- **3** interns passed a working internship in administrative work,
- **6** local and **1** international volunteers volunteered at the centre,

«Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Armavir Youth House” Open Youth Centre

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Արմավիր, Հայաստան

Նպատակ. «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի նպատակն է բարձրացնել Հայաստանում, մասնավորապես՝ Արմավիր համայնքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող չորրորդ երիտասարդական կենտրոնն է Հայաստանում, որը ներդրվել է 2022 թ. Արմավիր համայնքում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Արմավիրի համայնքապետարանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Կենտրոնը 2023 թ. ընթացքում ծառայություններ է մատուցել Արմավիրի և հարակից համայնքների 13-18 տարեկան 435 պատանիների և երիտասարդների, որից 242-ը՝ աղջիկ, 193-ը՝ տղա:

Գործունեության ուղղություններ՝
- Քաղաքացիական կրթություն,
- Կյանքի հիմնարար հմտություններ,
- Մասնագիտական կոմնորոշում,
- Առողջ ապրելակերպ,
- Առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- Բովանդակալից ժամանց:

Տրամադրված ծառայություններ՝
- Կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- Տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնաճանաչողական այցեր,
- Էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- Ժամանցային և հանրային միջոցառումներ,
- Անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- Շարժական երիտասարդական աշխատանք:

When: January - December 2023

Where: Armavir, Armenia

Aim: "Armavir Youth House" open youth centre aims to enhance civic activity and wellbeing of adolescents and youngsters aged 13-18 in Armenia, particularly in Armavir community through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: "Armavir Youth House" open youth centre is the fourth youth centre in Armenia to work with methodology and based on principles of open youth work, which was founded in 2022 in Armavir community by the "Youth Initiative Centre" NGO, with the support of the Armavir Municipality and UNICEF.

During 2023 the centre provided services to 435 youngsters aged 13-18 from Armavir and neighboring communities (242 girls and 193 boys).

DIRECTIONS OF THE ACTIVITIES:
- Civic education,
- Basic life skills,
- Professional orientation,
- Healthy lifestyle,
- Leadership and initiative,
- Meaningful entertainment.

SERVICES PROVIDED:
- Educational clubs, workshops and trainings,
- Information exchange and consultation,
- Educational visits,
- Excursions, hikings and camps,
- Fun and informal activities,
- Entertainment and public events,
- Individual or group youth work,
- Mobile youth work.

Կենտրոնի կողմից իրականացվել են՝

- **948** ժամ անհատական և խմբային երիտասարդական աշխատանք,
- **21** թեմատիկ շաբաթ,
- **16** թեմատիկ միջոցառումներ, **7**-ը կենտրոնի տարածքում, **9**-ը՝ հանրային,
- **8** հատուկ հյուրերի հյուրընկալում,
- **48** թեմատիկ աշխատարան՝ **100** ժամ տևողությամբ,
- **5** ուսումնական այց տարբեր կրթական և մշակութային կառույցներ՝ ճանաչողական և մասնագիտական կողմնորոշման նպատակով,
- **4** կրթական, զարգացման ակումբներ (ընդհանուր **127** ժամ), որոնք վարել են տեղացի և միջազգային կամավորներ,
- **20** ֆիլմի դիտում-քննարկում,
- **1** արշավ, **1** էքսկուրսիա՝ **60** երիտասարդների մասնակցությամբ,
- **20** ժամ աութրիչ աշխատանք Սպիտակի և հարակից գյուղերի **11** ուսումնական հաստատություններում,
- **47** ժամ շարժական երիտասարդական աշխատանք,

Կենտրոնի սաների կողմից իրականացվել են **6** նախաձեռնություններ,

Կենտրոնից **10** երիտասարդներ Աղվերանում մասնակցել են

- «Երիտասարդների առաջնորդության և քաղաքացիական կրթության» 5-օրյա ճամբարին,
- Երիտասարդական աշխատանքի ոլորտում կարողությունների զարգացման նպատակով կենտրոնի համակարգողը և երկու երիտասարդական աշխատողները մասնակցել են տեղական և միջազգային վերապատ-պատրաստումների, ընդհանուր՝ **190** ժամ տևողությամբ:
- Կարողությունների զարգացման նպատակով կենտրոնում կամավոր աշխատանքային փորձաշրջան է անցել գրասենյակային աշխատանքի **1** փորձնակ:
- Համայնքում բաց երիտասարդական աշխատանքի և կենտրոնի գործունեության մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հանդիպում **20** անձանց հետ:

The Centre implemented:

- **948** hours of individual and group youth work,
- **21** thematic weeks,
- **16** events, **7** of which in the centre, and **9** in public,
- Meetings with **8** special guests,
- **48** thematic workshops with a duration of **100** hours,
- **5** study visits to various educational and cultural institutions for professional orientation,
- **4** educational and development clubs (**127** hours in total) conducted by local and international volunteers,
- **20** movie screenings and discussions,
- **1** excursion and **1** hiking with the participation of **60** youngsters,
- **20** hours of outreach work in **11** educational institutions of Armavir and neighboring communities,
- **47** hours of mobile youth,
- **6** initiatives were implemented by the youngsters of the centre,
- **10** beneficiaries of the centre participated in the 5-day "Youth Leadership and Civic Education" camp in Aghveran,
- The coordinator and two youth workers of the centre participated in **190** hours of local and international projects for the purpose of capacity development and qualification in the youth work,
- **1** intern passed a working internship in administrative work,
- Meeting with **20** people in order to raise the level of awareness about open youth work and the activities of the centre in the community.

«Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն

“Ejmiatsin Youth House” Open Youth Centre

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Վաղարշապատ, Հայաստան

Նպատակ. «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի նպատակն է բարձրացնել Հայաստանում՝մասնավորապես Վաղարշապատ համայնքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող երրորդ երիտասարդական կենտրոնն է Հայաստանում, որը ներդրվել է 2022 թ. Վաղարշապատ համայնքում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Վաղարշապատի համայնքապետարանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Կենտրոնը 2023 թ. ընթացքում ծառայություններ է մատուցել Վաղարշապատի և հարակից համայնքների 13-18 տարեկան 793 պատանիների և երիտասարդների՝ որից 443-ը աղջիկ, 350-ը՝ տղա:

Գործունեության ուղղություններ՝

- Քաղաքացիական կրթություն,
- Կյանքի հիմնարար հմտություններ,
- Մասնագիտական կոմնորոշում,
- Առողջ ապրելակերպ,
- Առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- Բովանդակալից ժամանց:

Տրամադրված ծառայություններ՝

- Կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- Տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնաճանաչողական այցեր,
- Էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- Ժամանցային և հանրային միջոցառումներ,
- Անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- Շարժական երիտասարդական աշխատանք:

When: January - December 2023

Where: Vagharshapat, Armenia

Aim: "Ejmiatsin Youth House" open youth centre aims to enhance civic activity and wellbeing of adolescents and youngsters aged 13-18 in Armenia, particularly in Vagharshapat community through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: "Ejmiatsin Youth House" open youth centre is the third youth centre in Armenia to work with methodology and based on principles of open youth work, which was founded in 2022 in Vagharshapat community by the "Youth Initiative Centre" NGO, with the support of the Vagharshapat Municipality and UNICEF.
During 2023 the centre provided services to 793 youngsters aged 13-18 from Vagharshapat and neighbouring communities (443 girls and 350 boys).

DIRECTIONS OF THE ACTIVITIES:

- Civic education,
- Basic life skills,
- Professional orientation,
- Healthy lifestyle,
- Leadership and initiative,
- Meaningful entertainment.

SERVICES PROVIDED:

- Educational clubs, workshops and trainings,
- Information exchange and consultation,
- Educational visits,
- Excursions, hikings and camps,
- Fun and informal activities,
- Entertainment and public events,
- Individual or group youth work,
- Mobile youth work.

Կենտրոնի կողմից իրականացվել են՝

- **100** ժամ անհատական և խմբային երիտասարդական աշխատանք,
- **21** թեմատիկ շաբաթ,
- **16** թեմատիկ միջոցառումներ, **13**-ը կենտրոնի տարածքում, **3**-ը՝ հանրային,
- **8** հատուկ հյուրերի հյուրընկալում,
- **88** թեմատիկ աշխատարան՝ **127** ժամ տևողությամբ,
- **10** ուսումնական այց տարբեր կրթական և մշակութային կառույցներ՝ ճանաչողական և մասնագիտական կողմնորոշման նպատակով,
- **9** կրթական, զարգացման ակումբներ (ընդհանուր **160** ժամ), որոնք վարել են տեղացի և միջազգային կամավորներ,
- **20** ֆիլմի դիտում-քննարկում,
- **2** արշավ՝ **39** երիտասարդների մասնակցությամբ,
- **20** ժամ աութրիչ աշխատանք Վաղարշապատի և հարակից համայնքների **18** ուսումնական հաստատություններում,
- **52** ժամ շարժական երիտասարդական աշխատանք,
- Կենտրոնի սաների կողմից իրականացվել են **9** նախաձեռնություններ,
- Կենտրոնից **10** երիտասարդներ Աղվերանում մասնակցել են «Երիտասարդների առաջնորդության և քաղաքացիական կրթության» 5-օրյա ճամբարին,
- Երիտասարդական աշխատանքի ոլորտում կարողությունների զարգացման նպատակով կենտրոնի համակարգողը և երկու երիտասարդական աշխատողները մասնակցել են տեղական և միջազգային վերապատ-պատրաստումների, ընդհանուր՝ **189** ժամ տևողությամբ:
- Կարողությունների զարգացման նպատակով կենտրոնում կամավոր աշխատանքային փորձաշրջան են անցել գրասենյակային աշխատանքի **2** փորձնակներ:
- Կենտրոնում կամավորական աշխատանք են իրականացրել **10** տեղացի և **3** միջազգային կամավորներ,
- Բաց երիտասարդական աշխատանքի մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված **1** դասընթացի կազմակերպում հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ՄԿԱ գծով տեղակալների, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչների, ուսուցչի օգնականների համար՝ **26** հոգու մասնակցությամբ:
- **1** տարեկան հաշվետու միջոցառման կազմակերպում Արմավիրի մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանի և գործընկեր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

The Centre implemented:

- **100** hours of individual and group youth work,
- **21** thematic weeks,
- **16** events, **13** of which in the centre, and **3** - in public,
- Meetings with **8** special guests,
- **88** thematic workshops with a duration of **127** hours,
- **10** study visits to various educational and cultural institutions for professional orientation,
- **9** educational and development clubs (**160** hours in total) conducted by local and international volunteers,
- **20** movie screenings and discussions,
- **2** hikings with the participation of **39** youngsters,
- **20** hours of outreach work in **18** educational institutions of Armavir and neighboring communities,
- **52** hours of mobile youth,
- **9** initiatives were implemented by the youngsters of the centre, **10** beneficiaries of the centre participated in the 5-day "Youth
- Leadership and Civic Education" camp in Aghveran,
- The coordinator and two youth workers of the centre participated in **189** hours of local and international projects for the purpose of capacity development and qualification in the youth work,
- **2** interns passed a working internship in administrative work,
- **10** local and **3** international volunteers volunteered at the centre,
- **1** training for awareness raising on the open youth work in the frames of deputy directors for organizational affairs of public schools, managers for educational activities, teacher assistants with the participation of **26** representatives.
- **1** annual reporting event with the participation of the representatives of Armavir Regional Government staff, the representatives of Vagharshapat Municipality and partner organizations.

«Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն
“Gavar Youth House” Open Youth Centre

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Գավառ, Հայաստան

Նպատակ. «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի նպատակն է բարձրացնել Հայաստանում՝ մասնավորապես Գավառ քաղաքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող հինգերորդ երիտասարդական կենտրոնն է Հայաստանում, որը ներդրվել է Հայաստանում՝ «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: «Գավառի երիտասարդների տունը» հիմնվել է Գավառում 2022 թվականին՝ Յունիսեֆի և Գավառի համայնքապետարանի աջակցությամբ: Կենտրոնը 2023թ.-ի ընթացքում ծառայություններ է մատուցել Գավառի 13-18 տարեկան 580 շահառուի՝ 292 աղջիկ, 288 տղա:

Գործունեության ուղղություններ՝
- Քաղաքացիական կրթություն,
- Կյանքի հիմնարար հմտություններ,
- Մասնագիտական կոմնորոշում,
- Առողջ ապրելակերպ,
- Առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- Բովանդակալից ժամանց:

Տրամադրված ծառայություններ՝
- Կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- Տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնաճանաչողական այցեր,
- Էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- Ժամանցային և հանրային միջոցառումներ,
- Անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- Շարժական երիտասարդական աշխատանք:

When: January - December 2023

Where: Gavar, Armenia

Aim: To enhance the civic activism and well-being of young people aged 13-18 in Gavar through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: “Gavar Youth House” Open Youth Centre is the fifth youth centre in Armenia to work with methodology and based on principles of open youth work. During 2023 the centre provided services to 580 teenagers aged 13-18 in Gavar (288 boys and 292 girls).

DIRECTIONS OF THE ACTIVITIES:
- Civic education,
- Basic life skills,
- Professional orientation,
- Healthy lifestyle,
- Leadership and initiative,
- Meaningful entertainment.

SERVICES PROVIDED:
- Educational clubs, workshops and trainings,
- Information exchange and consultation,
- Educational visits,
- Excursions, hikings and camps,
- Fun and informal activities,
- Entertainment and public events,
- Individual or group youth work,
- Mobile youth work.

Կենտրոնի կողմից իրականացվել են՝

- **912** ժամ անհատական և խմբային երիտասարդական աշխատանք,
- **20** թեմատիկ շաբաթ,
- **62** թեմատիկ աշխատարան՝ **103** ժամ տևողությամբ, **9** ուսումնական այց տարբեր կրթական և մշակութային
- կառույցներ՝ ճանաչողական և մասնագիտական
- կողմնորոշման նպատակով,
- **2** քայլարշավ՝ **50** պատանիների մասնակցությամբ, **41** ժամ շարժական երիտասարդական աշխատանքի իրականացում Գավառ համայնքի 11 դպրոցներում,
- ուսումնարաններում և քոլեջներում «Հուզական ինտելեկտ», «Ինքնաճանաչում», «Մեդիագրագիտություն» թեմաներով:
- **10** ժամ տեղեկատվական հանդիպումների անցկացում
- Գավառի **10** դպրոցներում, քոլեջում և ուսումնարաններում, **6**-ը հյուր-խոսնակների հյուրընկալում կենտրոնում,
- **20** ֆիլմերի դիտում-քննարկումներ կենտրոնի երիտասարդների մասնակցությամբ,
- **7** նախաձեռնություն, որոնց շնորհիվ երիտասարդները զարգացրել են իրենց կազմակերպչական, առաջնորդության, ժամանակի կառավարման հմտությունները և ընդլայնել են գիտելիքները,
- **6** կրթական և զարգացման ակումբներ՝ **56** ժամ օտար լեզուների և համակարգչային ծրագրերի, **15** ժամ
- ստեղծագործական, որոնք վարել են տեղացի կամավորներ, **10** թեմատիկ միջոցառումներ կենտրոնի տարածքում, **3** փորձնակներ կենտրոնում գրասենյակային աշխատակցի աշխատանքային փորձաշրջան են անցել՝ մասնագիտական և աշխատանքային առաջխաղացման, կարողությունների զարգացման նպատակով,
- **7** տեղացի և **8** միջազգային կամավորների հետ համագործակցություն,
  Կենտրոնի սաներից **10**-ը՝ ընդգրկվելով որպես ջոկատավար, իրականացրել ենք 5-օրյա բակային ճամբար, որին մասնակցել է Գավառ քաղաքում բնակվող **30** պատանի,
- Կենտրոնի սաներից **10**-ը երիտասարդ Աղվերանում մասնակցել են «Երիտասարդների առաջնորդություն և քաղաքացիական ակտիվության» 5-օրյա ճամբարին,
- Համայնքում բաց երիտասարդական աշխատանքի և կենտրոնի գործունեության մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է հանդիպում, որին մասնակցել են Գավառ քաղաքի **24** դպրոցի **24** կազմակերպչական հարցերի գծով փոխտնօրեններ և քոլեջների կարիերայի պատասխանատուներ:
  Երիտասարդական աշխատանքի ոլորտում կարողությունների զարգացման նպատակով կենտրոնի համակարգողը և **2** երիտասարդական աշխատողները մասնակցել են **287** ժամ տեղական և միջազգային ծրագրերի:

The Centre implemented:

- **912** hours of individual and group youth work,
- **20** thematic weeks,
- **13** events, **10** of which in the centre, and **3** - in public,
- Meetings with **11** special guests,
- **58** thematic workshops with a duration of **111** hours,
- **12** study visits to various educational and cultural institutions for professional orientation,
- **9** educational and development clubs (**187** hours in total) conducted by local and international volunteers,
- **20** movie screenings and discussions,
- **3** excursion and 2 hikings with the participation of **62** youngsters,
- **21** hours of outreach work in **16** educational institutions of Spitak community,
- **56** hours of mobile youth,
- **12** initiatives were implemented by the youngsters of the centre,
- **10** beneficiaries of the centre participated in the 5-day "Youth Leadership and Civic Education" camp in Aghveran,
- Summer day-camp (one week), which was attended by **25** teenagers aged 10-12 living in Spitak, and **8** beneficiaries of the centre aged 13-18 volunteered in the day-camp as counselors and organizational team members,
- The coordinator and two youth workers of the centre participated in **357** hours of local and international projects for the purpose of capacity development and qualification in the youth work,
- **3** interns passed a working internship in administrative work,
- **6** local and **1** international volunteers volunteered at the centre,

«Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնում և գործարկում

Establishment and operation of “Artik Youth House” Open Youth Centre

Երբ. 20 մայիսի - 31 դեկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Արթիկ, Հայաստան

Նպատակ. Հիմնել բաց երիտասարդական կենտրոն, որի նպատակն է բարձրացնել Հայաստանում՝ մասնավորապես Արթիկ համայնքում, 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Նկարագրություն. 2023 թ. հուլիսի 3-ին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ խորհրդի նախագահ Արթուր Նաջարյանը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը և Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ Արթիկում երիտասարդական կենտրոն հիմնելու մասին:

«Արթիկի երիտասարդների տուն»-ը լինելու է բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող երիտասարդական կենտրոն:

Կենտրոնը համայնքահեն ծառայություններ է տրամադրելու Արթիկ համայնքի 13-18 տարեկան դեռահասներին և երիտասարդներին:

When: 20 May - 31 December 2023

Where: Artik, Armenia

Aim: To establish an open youth centre, the purpose of which is to increase the civic activism and well-being of young people aged 13-18 in Armenia, particularly in Artik community through the implementation of professional youth work and the provision of accessible youth services.

Description: On the 3rd of July 2023, the "Youth Initiative Centre" NGO Board President Artur Najaryan, UNICEF Armenia representative Christine Weigand and the head of Artik community, Ananik Voskanyan, signed a Memorandum of Understanding to establish a youth centre in Artik.

"Artik Youth House" will be a youth centre working with the methodology and principles of open youth work.

The center will provide community services to adolescents and youngsters aged 13-18 of the Artik community.

«ԲայքԼայֆ» սոցիալական ձեռնարկատիրություն
"BikeLife" social entrepreneurship

Երբ. 1 մարտի - 30 նոյեմբերի 2023 թ.

Որտեղ. Ծիրակ, Հայաստան

Նպատակ. Քարոզել հեծանվավարությունը Գյումրիում վերջինիս շրջակայքում նպաստելով երիտասարդների կյանքի որակի, շրջակա միջավայրի բարելավմանը, համայնքի ենթակառուցվածքների, զբոսաշրջության զարգացմանը՝ տեղացիներին և հյուրերին մատչելի ծառայություններ մատուցելով:

Նկարագրություն. «ԲայքԼայֆ» ՍԶ-ն տրամադրում է հետևյալ ծառայությունները՝ հեծանիվների, հեծանվային պարագաների վարձույթ, հեծանվավարության ուսուցում, հեծանվարշավների կազմակերպում, հեծանիվների վերանորոգում, հեծանվային գիդի ծառայություն, ուղեկցորդի ծառայություն:

2023 թվականին եղել է 1 հանրային միջոցառման մասնակցություն Գյումրի քաղաքում «Երիտասարդության միջազգային օր 2022»-ի շրջանակներում: Միջոցառմանն անմիջական ներգրավվածություն են ունեցել 40 հեծանվորդ: Իսկ արդեն համացանցային հրապարակումներով այդ միջոցառումների, դրա թողած ազդեցության, հեծանվային մշակույթի կարևորության, առողջ կենսակերպ վարելով անհրաժեշտության մասին տեղեկացել է ավելի քան 13 հազար մարդ: Տարվա ընթացքում իրականացրել ենք անհատական հեծանվաուսուցումներ:

Գործունեությունից առաջացած շահույթը ծառայեցվում է ԵՆԿ ՀԿ-ի «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի գործառույթների իրականացմանը, որից օգտվում են հարյուրավոր դեռահասներ ու երիտասարդներ:

When: 1 March - 30 November 2023

Where: Shirak, Armenia

Aim: The aim of "BikeLife" SE is to spread cycling in and around Gyumri, promoting the improvement of the life quality of young people, the environment, the infrastructure of the community, the development of tourism providing affordable services to locals and guests.

Description: "BikeLife" SE provides the following services:

- Rent of bicycles and accessories,
- Cycling training,
- Organising bicycle trips,
- Repair of bicycles,
- Bicycle guide service,
- Guide service.

In 2023, we participated in 1 public event in the frames of "International Youth Day 2023" in Gyumri city. 40 cyclists were directly involved in the event. More than 13,000 people have learned about the event and its impact, the importance of cycling culture, and the need to lead a healthy lifestyle through social media posts. During the year, we also carried out individual bicycle training.

The profits from the activities are used to implement the functions of "Gyumri Youth House" open youth centre of YIC NGO, which serves hundreds of teenagers and young people.

Արշավներ ԵՆԿ-ի հետ
Hiking with YIC

Երբ. Ապրիլ 2023 թ.

Որտեղ. Վայոց ձոր, Հայաստան

Նպատակ. Բացահայտել Հայաստանի պատմամշակութային տեսարժան վայրերը, խթանել երիտասարդների ֆիզիկական առողջությունը՝ ճանաչողական արշավների միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն պարբերաբար կազմակերպում է ճանաչողական արշավներ, որոնց նպատակն է բացահայտել Հայաստանի պատմամշակութային ժառանգություններն ու տեսարժան վայրերը: Լավ մշակված երթուղիով հիանալի թիմով արշավային միջոցառումները անմոռանալի փորձ են դառնում բոլոր մասնակիցների համար՝ վերջիններիս հնարավորություն տալով ձեռք բերել նոր կապեր:

2023 թվականի ընթացքում ԵՆԿ ՀԿ-ն նախաձեռնել է 1 արշավ դեպի Վայոց ձորի մարզ՝ Սպիտակավորի վանք, որին մասնակցել է 22 արշավասեր:

When: April 2023

Where: Vayots dzor, Armenia

Aim: Discover the historical and cultural sights of Armenia, promote the physical health of young people through cognitive hikings.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO regularly organises hiking trips and excursions the purpose of which is to reveal the historical and cultural heritage and attractions of Armenia. With a well-planned route and a great team, hiking events become an unforgettable experience for all participants giving them the opportunity to make new connections.

During 2023, YIC initiated 1 hiking trip to Vayots dzor region by visiting the Spitakavor Monastery in which 22 hikers participated.

Ակումբներ
Clubs

Երբ. սեպտեմբեր-դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի գործունեության ուղղություններից է, որի նպատակն է լեզվի ակումբների կազմակերպման միջոցով նպաստել երիտասարդների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

2023 թվականի ընթացքում ԵՆԿ-ում գործել են անգլերենի խոսակցական և սկսնակ մակարդակի ակումբներ, որոնց մասնակցել է 11 երիտասարդ:

Անգլերենի խոսակցական ակումբը վարել է ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավոր Մարկ Քլենսին, իսկ անգլերենի սկսնակ մակարդակի ակումբը՝ երիտասարդ մասնագետ, ԵՆԿ կամավոր Մարիամ Գրիգորյանը: Սկսնակ անգլերենի ակումբի ավարտին բոլոր մասնակիցները ստացան հավաստագրեր:

When: September - December 2023

Where: Gyumri, Armenia

Description: The clubs are one of the activities of the "Youth Initiatives Center" NGO aimed at fostering the development of language communication skills among young people through the establishment of language clubs.

In 2023, YIC operated the English-speaking and beginner-level clubs. A total of 11 young people participated in these language clubs throughout the year.

The English-speaking club was facilitated by Mark Clancy, a volunteer from the US Peace Corps, while the beginner-level club was led by Mariam Grigoryan, young specialist and YIC local volunteer. Upon completion of the beginner club, all participants received certificates.



ԵՆԿ շարժունակության ծրագրեր
YIC Mobility Projects

Երբ. հունվար - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Հայաստան, Վրաստան, Հունաստան, Լիտվա, Նիդերլանդներ, Խորվաթիա, Թուրքիա, Ռումինիա, Ֆրանսիա և ֆրանսիական Ռեյունյոն կղզի, Գերմանիա, Իտալիա

- **Շարժունակության ծրագրերի թիվը Հայաստանում՝ 5**
- **Հյուրընկալած մասնակիցների թիվը՝ 96 (13-ը ՀՀ-ից և 83-ը արտերկրից)**
- **Շարժունակության ծրագրերի թիվը Հայաստանից դուրս՝ 13**
- **Ուղարկած մասնակիցների թիվը՝ 49**

Նկարագրություն. 2023 թվականին ԵՆԿ ՀԿ-ն, ընդլայնելով համագործակցությունը տարբեր միջազգային գործընկերների հետ, Եվրոպական միության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում երիտասարդների, երիտասարդական աշխատողների և որոշում կայացնողների կարողությունների զարգացման տարբեր հնարավորություններ է ընձեռել Հայաստանից 49 անհատի: 2023 թվականին ԵՆԿ ՀԿ-ն հյուրընկալել է նաև 5 միջազգային շարժունակության ծրագիր Հայաստանում, որից 4-ին մասնակցել են 13 երիտասարդներ, երիտասարդական աշխատողներ և երիտասարդական ոլորտի ներկայացուցիչներ Հայաստանից, ու ևս 83-ը՝ այլ երկրներից:

Իրականացված ծրագրերը ներառել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են երիտասարդական աշխատանքը, հոգեկան առողջությունը, մշակույթն ու արվեստը, մարդու իրավունքները, խաղաղաշինությունը, թվային և մեդիա գրագիտությունը, որակյալ կրթական ծրագրերի մշակում և իրականացումը:

When: January – December 2023

Where: Armenia, Georgia, Greece, Germany, Romania, Lithuania, Turkey, Netherlands, Croatia, France and the French Reunion Island

- **Number of mobility projects in Armenia: 5**
- **Number of participants hosted: 96 (13 from Armenia, 83 from abroad)**
- **Number of mobility projects outside Armenia: 13**
- **Number of participants sent: 49**

Description: In 2023, YIC NGO expanded the cooperation with various international partners by providing a wide range of capacity development opportunities to young people, youth workers and decision-makers from Armenia. In the result, 49 individuals from the mentioned groups had the chance of participating in mobility projects within the framework of the European Union Erasmus+ programme. In 2023, YIC also hosted 5 international mobility projects in Armenia. In 4 of them 13 young people, youth workers and youth field representatives participated from Armenia. 83 participants were from other countries.

These projects covered such topics as youth work, mental health, culture and arts, human rights, peacebuilding, digital and media literacy, inclusion, quality programme designing, etc.

ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ. ՄԻԱՍԻՆ ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ

EU4GENDER EQUALITY: TOGETHER AGAINST GENDER STEREOTYPES AND GENDER-BASED VIOLENCE

Երբ. օգոստոս 2020 թ. - հունիս 2023 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Տավուշ, Հայաստան

Նպատակ. Ամրապնդել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ կանանց ու տղամարդկանց դերերի հանրային ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու, երեխաների խնամքի, ծնողավարության մեջ տղամարդկանց մասնակցությունը խթանելու միջոցով:

Նկարագրություն. եռամյա ծրագիր է, որը Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ և «ՄԱԿ Կանայք» կազմակերպության կողմից Արևելյան Եվրոպայի վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա:

«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում ծրագիրն իրականացնող հիմնական գործընկերներից է:

Ծրագրի շրջանակներում ՀՀ 3 թիրախային մարզերում հիմնվել են «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոններ, որոնք նյութատեխնիկապես հագեցած և կահավորված տարածքներ են, որտեղ անցկացվում են դասընթացներ, թեմատիկ հանդիպում-քննարկումներ և միջոցառումներ՝ ուղղված կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը, երեխայի խնամքի ու ծնողավարման մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը:

Ծրագրի շահառուներն են Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի 18-40 տարեկան երիտասարդ տղամարդիկ և կանայք, հայրիկներն ու մայրիկները:

2023 թվականի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- 6 դասընթաց Հայրիկների դպրոց հանդիպում-քննարկումների շրջանակներում (թեմաներ՝ «Զույգերի հաղորդակցություն», «Երեխայի սեռով պայմանավորված խաղի ընտրություն», «Երեխայի խնամք և խնամքի բաշխում», «Երեխայի կարիքներն և իրավունքները»), որոնց մասնակցել են 18-40 տարեկան 61 երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
- 3 թեմատիկ հանդիպում (թեմաներ՝ «Գիտակցված խնողավարում», «Ինչպե՞ս համագործակցել երեխայի հետ», «Հաղորդակցման ձևերի ազդեցությունը երեխայի կյանքի ուղղության վրա»), որոնց մասնակցել են 18-40 տարեկան 101 երիտասարդ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
- 1 հանրային միջոցառում (Ընտանիքի միջազգային օր), որին մասնակցել են 18-40 տարեկան 75 երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ Շիրակի, Լոռու ու Տավուշի մարզերից:

When: August 2020 - June 2023

Where: Shirak, Lori, Tavush regions, Armenia

Aim: To strengthen equal rights and opportunities for women and men through shifting social perceptions around gender roles, tackling gender stereotypes and increasing men's participation in childcare and other domestic responsibilities.

Description: This is a three-year programme founded by the European Union and implemented jointly by UNFPA and UN Women at regional and national levels in six EAP countries: Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine.

In Armenia, the "Youth Initiatives Center" NGO is one of the main implementing partners of the Programme

Within the framework of the programme, "Family Corner" resource centres have been established in 3 regions of Armenia. The centres are equipped and furnished spaces where training, thematic meeting discussions and events are held, aimed at changing stereotypes about the roles of women and men, increasing the involvement of men in child care and parenting.

The beneficiaries of the programme are 18-40-year-old young men, women, fathers and mothers from 3 (three) EU target regions: Shirak, Lori and Tavush.

From January to June 2023, in the framework of the programme, the following activities have been implemented:

- 6 meetings within the Papa School meeting discussions (topics: "Couples Communication", "Gender in Play", "Child Care and Division of Caregiving", "The Needs and Rights of Children"), attended by 111young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- 3 thematic meetings, attended by 61 young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- 1 public event (International Family Day), attended by 75 young people aged 18-40: men and women, fathers and mothers from Shirak, Lori and Tavush regions.

Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի
Adolescents for Climate Actions in Communities

Երբ. օգոստոս - դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Շիրակ, Գեղարքունիք, Հայաստան

Նպատակ. ստեղծել հնարավորություններ համայնքների զարգացմանը՝ աջակցելով դեռահասներին ու երիտասարդներին դառնալու կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված գործողությունների և լուծումների իրականացնողներ, որը իր հերթին կբերի կլիմայի փոփոխության անբարենպաստ գործոնների ու ծայրահեղ դրսևորումների նկատմամբ նվազեցմանը:

Նկարագրություն. ծրագիրը ֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից և իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների հետ համագործակցությամբ:

«Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում հայտարարված ենթադրամաշնորհային բաղադրիչը Շիրակում և Գեղարքունիքում իրականացվում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակում ենթադրամաշնորհային մրցույթին ներկայացված նախագծերը պետք է ուղղված լինեն համայնքային մակարդակում կլիմայի փոփոխության հարմարվողականության գերակա լուծումներին, բացահայտել տեղական կլիմայական ռիսկերը, նվազեցնել համայնքի խոցելիությունը կլիմայի փոփոխության անբարենպաստ գործոնների ու ծայրահեղ դրսևորումների նկատմամբ, ստեղծել հնարավորություններ համայնքային զարգացման համար:

Ենթադրամաշնորհային մրցույթին առաջնահերթություն տրվելու են երիտասարդների կողմից կամ մասնակցությամբ ներկայացված նախագծերին:

Ենթադրամաշնորհային բաղադրիչի շահառուներն են Շիրակի և Գեղարքունիքի մարզերի համայնքապետարանները (Բաղադրիչ 1) և ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, ՀԿ-ներ, հիմնադրամներ, գրանցված այլ ոչ առևտրային կազմակերպություններ (Բաղադրիչ 2):

When: August - December 2023

Where: Shirak, Gegharkunik, Armenia

Aim: To create opportunities for community development by empowering adolescents and young people to take action and implement solutions to mitigate climate change, which, in turn, will lead to a decrease in negative impacts and severe occurrences linked to climate change.

Description: This programme is funded by the Austrian Development Agency (ADA) with funds from the Austrian Development Cooperation, and implemented by UNICEF in partnership with the Ministries of Environment, Territorial Administration and Infrastructure, Education, Science, Culture and Sport.

The sub-grant component announced within the framework of the "Adolescents for Climate Actions in Communities" program in the Shirak and the Gegharkunik Marzes is implemented by the "Youth Initiative Centre" NGO in cooperation with UNICEF.

Within the programme's framework, the sub-grant component should target priority solutions for adapting to climate change at the community level, which means identifying local climate risks, diminishing community vulnerability to adverse impacts and extreme climate change events, and fostering opportunities for community development.

In the sub-grant component, priority will be given to projects submitted by or with the participation of adolescents.

The beneficiaries of the sub-grant component are the local governments of the Shirak and the Gegharkunik Marzes (Component 1) and community and state NPOs, NGOs, foundations, and other registered non-commercial organizations (Component 2).

2023 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

- ենթադրամաշնորհային մրցույթի հայտարարում,
- Շիրակի և Գեղարքունիքի մարզպետարանների համապատասխան բաժինների հետ աշխատանք,
- 4 համայնքներում պաշտոնական այցերի և հանդիպումների կազմակերպում,
- 174 պետական և ոչ պետական ներկայացուցիչների
- մասնակցությամբ 6 տեղեկատվական հանդիպումներ,
- առցանց, հեռախոսային և առերես խորհրդատվություններ,
- 18 նախագծերի ընտրություն. 16-ը՝ Շիրակի և Գեղարքունիքի 6 խոշորացված համայնքներից (4 նախագիծ Ախուրյան համայնքից, 1 նախագիծ Ամասիա համայնքից, 1 նախագիծ Արթիկ համայնքից, 6 նախագիծ Անի համայնքից, 2 նախագիծ Վարդենիս համայնքից, 2 նախագիծ Ճամբարակ համայնքից) և ևս 2 նախագիծ լրացուցիչ ֆինանսավորմամբ՝ Սյունիքի մարզից (1 նախագիծ Գորիս համայնքից և 1 նախագիծ Մեղրի համայնքից),
- 12 մոնիտորինգային այց,
- 960 երիտասարդների շրջանակում «Կլիմայի փոփոխությունների և շրջակա միջավայրի պահպանության» թեմայով դասընթաց,
- ենթադրամաշնորհային մրցույթի ամփոփիչ միջոցառում:

During 2023, in the framework of the programme, the following activities have been implemented:

- Announcement of the sub-grant component,
- Cooperation with the relevant departments of the governorates of the
- Gegharkunik and the Shirak Marzes,
- Official visits with leaders of 4 consolidated communities were conducted,
- Implementation of 6 outreach meetings with representatives of 174 state and non-state institutions,
- Provision of online and offline consultations,
- 18 projects instead of 16 were funded after making calculations of the selected projects' budgets,
- Performing 12 monitoring visits.
- Implementation of informational courses with the participation of 960
- young people under the title "Climate changes and environmental protection",
- Closing Event for the sub-grant competition.

Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ

Youth Work for Rehabilitation of Young People Affected by War and Armed Conflicts

Երբ. մարտ 2023 թ. - հունիս 2024 թ.

Որտեղ. Ծիրակ, Գեղարքունիք, Արմավիր, Հայաստան

Նպատակ. միջազգային գործընկեր կառույցների դրական փորձի հիման վրա մշակել կիրառելի գործիքակազմ՝ պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանքի որակը բարելավելու համար:

Նկարագրություն. երկարաժամկետ Էրազմուս+ համագործակցային ծրագիր է, որը «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է միջազգային գործընկեր կառույցների՝ Centro Studi Sereno Regis (Իտալիա), Center for Euroinitiatives (Ուկրաինա), Youth Peace Ambassadors Network (Ֆրանսիա), Peace Up (Գերմանիա), Help.NGO Polska (Լեհաստան), Sağlam Düşüncə Gənclər Təşkilatı SDGT (Ադրբեջան), Local Peace (Կոսովո), Libre-pensadores de la Sierra de Madrid - LPSM (Իսպանիա) հետ համագործակցությամբ:

ԵՆԿ-ն Հայաստանում ծրագիրն իրականացնող հիմնական գործընկերն է:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են սեմինարներ, վերապատրաստումներ և հանդիպումներ Հայաստանից, Իտալիայից, Ուկրաինայից, Իսպանիայից, Ադրբեջանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Կոսովոյից և Լեհաստանից հրավիրված երիտասարդական աշխատողների, հետազոտողների ու հումանիտար ոլորտի փորձագետների համար, որին հաջորդել է ձեռք բերված գիտելիքների փոխանակումը գործընկերների հետ, տեղական դասընթացների իրականացումը և ուղեցույցի մշակումը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպված միջազգային վերապատրաստումներին մասնակցելու հնարավորություն են ստացել Գյումրու, Գավառի և Արմավիրի «Երիտասարդական տուն» բաց երիտասարդական կենտրոնների 3 երիտասարդական աշխատողները, որոնք իրենց ստացած գիտելիքների հիման վրա աշխատել են տեղական մակարդակում երիտասարդների հետ:



When: March - June 2023

Where: Shirak, Gegharkunik, Armavir, Armenia

Aim: To develop a practical toolbox based on the positive experience of partner institutions to improve the quality of work with young people affected by war.

Description: The long-term Erasmus+ cooperation in partnership project, is implemented by a consortium of YIC Gyumri - Youth Initiative Centre NGO (Armenia), Centro Studi Sereno Regis (Italy), Center for Euroinitiatives (Ukraine), Youth Peace Ambassadors Network (France), Peace Up (Germany), Help.NGO Polska (Poland), Sağlam Düşüncə Gənclər Təşkilatı SDGT (Azerbaijan), Local Peace (Kosovo), Libre-pensadores de la Sierra de Madrid - LPSM (Spain).

In Armenia, YIC is the main implementing partner of the Project.

Within the framework of the project, there were a series of seminars, training sessions, and meetings conducted for youth workers, researchers, and humanities experts from Armenia, Italy, Ukraine, Spain, Azerbaijan, France, Germany, Kosovo, and Poland. After these events, the acquired knowledge was exchanged with partners. Local training sessions were held with youth, and a toolkit was developed.

3 youth workers from Gyumri, Gavar and Armavir "Youth House" open youth centres benefitted from the training opportunities of the programme who later on conducted local workshops and training for the young people they work with.

2023 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

- 3-օրյա մեկնարկային հանդիպում (ք. Թորինո, Իտալիա),
- 1-շաբաթյա սեմինարների շարք (Ալպինյանո ավան, Իտալիա),
- հետազոտություն 9 երկրների երիտասարդական աշխատողների շրջանակում,
- 1-շաբաթյա վերապատրաստումների շարք (Լը Դեզեր, Ֆրանսիա),
- 9 տեղական դասընթացների շարք (Ծիրակ, Գեղարքունիք և Արմավիր),
- 4-օրյա հանդիպում-քննարկում՝ ուղեցույցի մշակման աշխատանքները սկսելու նպատակով (Պոտսդամ, Գերմանիա):
- ուղեցույցի նախնական տարբերակի մշակում:

During 2023, in the framework of the programme, the following activities have been implemented:

- A 3-day kick-off meeting (Turin, Italy),
- A series of 1-week seminars (Alpignano, Italy),
- Research among youth workers from 9 countries,
- A series of 1-week training sessions (Le Désert, France,
- A series of 9 local courses (Shirak, Gegharkunik, and Armavir),
- A 4-day meeting and discussion to start the development of the guide (Potsdam, Germany),
- Development of the preliminary version of the guide.

«Քայլ առաջ՝ դեպի կոնֆլիկտների կառավարում» միջազգային դասընթաց

“Step Forward to Conflict Management" International Training Course

Երբ. 3 – 10 հուլիսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Երիտասարդների, երիտասարդական աշխատողների շրջանում տարածել խաղաղության մշակույթը՝ միջսահմանային երկխոսության և խաղաղաշինության փորձի փոխանակման միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ֆրանսիական «Nouveau Départ NGO» հիմնադրամի հետ համատեղ, հուլիսի 3-10-ը Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Գյումրիում հյուրընկալեց «Step Forward to Conflict Management» երիտասարդական աշխատանքում կոնֆլիկտների հաղթահարման և բանակցությունների վարման թեմայով միջազգային դասընթացը:
Ծրագրին մասնակցում էին երիտասարդական ոլորտի 25 ներկայացուցիչներ Հայաստանից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իտալիայից, Վրաստանից, Էստոնիայից և Ռուսաստանի Դաշնությունից, ովքեր ծանոթացան կոնֆլիկտների տեսակներին, բանակցությունների վարման և խաղաղաշինության հմտություններին:

When: 3 – 10 July 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To share the culture of peace among young people, youth leaders/workers by means of giving ground for exchanging peace building and cross-border practices.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with “Nouveau Départ” NGO (France) hosted a 7-day training course "Step Forward to Conflict Management" on conflict resolution and negotiation in youth work in the framework of “Erasmus+” programme from 3rd to 10th of July, 2023 in Gyumri, Armenia.
The training course was attended by 25 representatives of the youth field from Armenia, France, Greece, Italy, Georgia, Estonia and the Russian Federation who learned about the types of conflicts, peacebuilding and acquired negotiation skills.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2
STRATEGIC AIM

ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

CONTRIBUTE TO THE IMPROVEMENT OF THE SOCIAL-ECONOMIC CONDITIONS FOR THE YOUTH

ԽՆԴԻՐՆԵՐ

2.1. Բարձրացնել երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում:
2.2. Աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը իրացմանը:
2.3. Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը:
2.4. Զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում:

OBJECTIVES

2.1. To develop a culture of volunteerism among young people.
2.2. To increase the competitiveness of young people in the labour market.
2.3. To support the development and realization of youth entrepreneurial skills.
2.4. To promote the spirit of initiative among the youth.

«UPSHIFT Սյունիք» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագիր

“UPSHIFT SYUNIK” Cultivating Adolescents Growth and Engagement in Community Development project

Երբ. 1 հունվարի - 15 հուլիսի 2023 թ.

Որտեղ. Սյունիքի մարզ, Հայաստան

Նպատակ. Նպաստել Քարահունջ, Վերիշեն և Շինուհայր համայնքներում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքի կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ, համագործակցելով «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ի հետ, Եվրոպական միության աջակցությամբ Սյունիքի մարզի Քարահունջ, Վերիշեն և Շինուհայր համայնքներում իրականացրին «UPSHIFT Սյունիք» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագիրը:

Ծրագրի սկզբում տեղեկատվական և համայնքային կարիքների գնահատման հանդիպումներ անցկացվեցին Քարահունջ, Վերիշեն և Շինուհայր համայնքներում գործող 3 դպրոցներում որոնց ընթացքում 12-18 տարեկան 170 դեռահասների ներկայացվեցին ծրագրի նպատակներն ու ծրագրին դիմելու կարգը: Այնուհետեւ հայտարարվեց Քարահունջ, Վերիշեն և Շինուհայր համայնքների 12-18 տարեկան երիտասարդների՝ համայնքային խնդիրներ լուծելուն միտված գաղափարների մրցույթ: Ներկայացված համայնքային երիտասարդական ծրագրերի 13 գաղափարներից (8-ը՝ Գորիս, 5-ը՝ Տաթև խոշորացված համայնքներից) ընտրվեց 3-ը, որոնք ներկայացնող պատանիները մասնակցեցին «Ծրագրի նախագծում» և «Ծրագրի իրականացում» թեմաներով դասընթացների՝ սովորելով, թե ինչպես գաղափարը վերածել ծրագրի, որը հնարավոր կլինի իրագործել: Ծրագրերը կյանքի կոչելու համար թիմերը ստացան 100,000-ական դրամ ֆինանսական աջակցություն:

Ծրագրի կողմից ֆինանսական աջակցություն ստացած թիմերն են՝

- «ԿԻՊԿԱՍ»
- «Խելացի երիտասարդ՝ ակտիվ բնակավայր»
- «Սյունյաց լեռների առաջնորդները»

Յուրաքանչյուր թիմի կցված էր մեկ մենթոր, որը աջակցություն էր տրամադրում դեռահասների կողմից առաջարկված ծրագրային գաղափարները մշակելու և կյանքի կոչելու համար: Ծրագիրն ամփոփվեց ավարտական միջոցառմամբ, որի ընթացքում թիմերը ցուցադրեցին իրենց աշխատանքի արդյունքները:

When: 1 January - 15 July 2023

Where: Syunik region, Armenia

Aim: To empower 12-18 years old adolescents from Karahunj, Verishen and Shinuhayr communities to be more proactive in practicing civic engagement and in advocating for their rights and positive changes at local and national levels, therefore investing in a more successful future for themselves and their communities.

Description: "Youth Initiative Centre" NGO in cooperation with the UNICEF Armenia and "Goris Press Club" NGO with the support of the European Union implemented the "UPSHIFT Syunik" Cultivating Adolescents Growth and Engagement in Community Development project in Karahunj, Verishen and Shinuhayr communities of the Syunik region.

At the beginning of the project, informational and community needs assessment meetings were held in 3 schools operating in Karahunj, Verishen and Shinuhayr communities, during which 170 adolescents aged 12-18 were acquainted with the objectives of the project and the procedure for applying to the project. Then, a competition of ideas for solving community problems was announced for youngsters aged 12-18 from the mentioned communities. Out of 13 ideas presented (8 from Goris, 5 from Tatev enlarged communities) 3 were selected. The youth participated in trainings on "Project Design" and "Project Management" learning how to turn an idea into a project, which will be possible to implement. To implement the projects, the teams received financial support of 100,000 AMD each.

The teams financially supported within the programme are:
“KIPKAS”

- “Smart youth - active community”
- “Leaders of the Syunyats Mountains”
- Each team had one mentor who provided support to develop and implement the projects. The programme was summed up with the closing event during which the teams presented the results of their work.

ԵՀԿ Հյուրընկալում
ESC hosting

«Բացահայտիր Կովկասը»

Երբ. 01 սեպտեմբերի 2022 թ. - 31 օգոստոսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը և բարձրացնել վերջիններիս դերը հասարակության մեջ՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Նիլս Ֆրեդրիխ (Գերմանիա)

Նկարագրություն. Պլանավորել, նախապատրաստել և անցկացնել գերմաներեն լեզվի դասեր «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում և տեղի դպրոցներում, ոչ-ֆորմալ կրթական մեթոդներով անգլերեն դասավանդել տեղի մանկապարտեզում, իրականացնել «Եվրոպական ակումբ» ԵՆԿ ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար, կազմակերպել կամավորությունը խթանող միջոցառումներ, ինչպես նաև ներկայացնել իր երկրի մշակույթը, ուտեստները, պարերը և սովորույթները:

“Discover the Caucasus”

When: 01 September 2022 - 31 August 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To ensure the self-development of young people and empower them to play an active role in the society through peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Nils Friedrich (Germany)

Description: To plan, prepare and run the German language classes in “Gyumri Youth House” open youth centre and at local schools, to teach English at the kindergarten with non-formal educational methods, run a “European Club” for the beneficiaries of “Youth House” open youth centres of YIC, to organize promotional activities about volunteering and present the culture, food, dances and traditions of his country.

«Move Your Corps»

Երբ. 01 հունվարի 2023 թ. – 16 հուլիսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը և միջմշակութային հաղորդակցությունը՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Բլուեն Սուլիման (Ֆրանսիա)

Նկարագրություն. Պլանավորել, նախապատրաստել և անցկացնել «Եվրոպական ակումբ» ԵՆԿ ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար, ֆրանսերեն դասավանդել տեղի դպրոցներից մեկում, կազմակերպել կամավորությունը խթանող միջոցառումներ, ինչպես նաև ներկայացնել իր երկրի մշակույթը, ուտեստները, պարերը և սովորույթները:

«Move Your Corps»

When: 01 January 2023 - 16 July 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism and intercultural communication through peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Bleuenn Souliman (France)

Description: To plan, prepare and run a “European Club” for the beneficiaries of “Youth House” open youth centres of YIC, to teach French at a local school, to organize promotional activities about volunteering and present the culture, food, dances and traditions of his country.

ԵՀԿ Ուղարկում
ESC sending

«Եվրոպական համերաշխության կորպուս կամավորական ծրագիր»

Երբ. 01 նոյեմբերի 2023 թ. – 31 հոկտեմբերի 2024 թ.

Որտեղ. Վիլնյուս, Լիտվա

Հյուրընկալող կազմակերպություն. VšĮ «Vilniaus SOS vaikų kaimas»

Նպատակ. Նպաստել երիտասարդների միջմշակութային իրազեկվածության բարձրացմանը ոչ-ֆորմալ կրթական գործունեության, մի շարք միջոցառումների և աշխատարանների կազմակերպման միջոցով:

Կամավորի անունը. Սերգեյ Սիմոնյան

Նկարագրություն. Աջակցել երիտասարդների ժամանցի, տարբեր խաղերի և միջոցառումների կազմակերպմանը, անցկացնել հայկական մշակույթի երեկոներ, կազմակերպել խոհարարական դասընթացներ:

"European Solidarity Corps Volunteering project"

When: 01 November 2023 - 31 October 2024

Where: Vilnius, Lithuania

Hosting organization: VšĮ "Vilniaus SOS vaikų kaimas"

Aim: To promote the intercultural awareness of young people through non-formal activities and organization of different events and workshops.

Volunteer Name: Sergey Simonyan

Description: To assist in organizing entertainment activities, various games and events for the youngsters, to hold Armenian cultural events and cooking classes.

«Moving forward 2.0»

Երբ. 27 մարտի 2023 թ. – 27 փետրվարի 2024 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. WSG University in Bydgoszcz

Նպատակ. Նպաստել երիտասարդների հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ փոփոխություններ բերելով տարբեր ոլորտներում, ինչպիսիք են միջազգային հարաբերությունները, դիզայն ստուդիան (մարքեթինգի բաժինը), մանկապարտեզը և լուսանկարչությունը:

Կամավորի անունը. Գոռ Մուրադյան,
Անահիտ Հովհաննիսյան

Նկարագրություն. Աջակցել թիմին միջազգային ուսանողների համար ինտեգրման, մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպման գործընթացում, պատրաստել պոստերներ, տեղեկատվական թերթոններ ԵՀԿ ծրագրերի վերաբերյալ, լուսանկարչական ստուդիայում կազմակերպել ֆոտո ցուցահանդեսներ և տարբեր աշխատարաններ:

«Moving forward 2.0»

Երբ. 12 հոկտեմբերի 2023 թ. – 02 սեպտեմբերի 2024 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. WSG University in Bydgoszcz

Նպատակ. Նպաստել երիտասարդների հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ փոփոխություններ բերելով տարբեր ոլորտներում, ինչպիսիք են միջազգային հարաբերությունները, դիզայն ստուդիան (մարքեթինգի բաժինը), մանկապարտեզը և լուսանկարչությունը:

Կամավորի անունը. Էմիլյա Նիկողոսյան

Նկարագրություն. Աջակցել թիմին միջազգային ուսանողների համար ինտեգրման, մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպման գործընթացում, պատրաստել պոստերներ, տեղեկատվական թերթոններ ԵՀԿ ծրագրերի վերաբերյալ, լուսանկարչական ստուդիայում կազմակերպել ֆոտո ցուցահանդեսներ և տարբեր աշխատարաններ:

"Moving forward 2.0"

When: 27 March 2023 – 27 February 2024

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: WSG University in Bydgoszcz

Aim: To contribute to the development of skills and competences among young people while bringing changes in different areas such as international affairs, design studio (marketing department), nursery and photography.

Volunteer Name: Gor Muradyan, Anahit Hovhannisyan

Description: To support the team with organization of integrative, cultural and entertainment events for international students, to prepare posters and leaflets on ESC programme, to organize photo exhibitions and various workshops at the photo studio.

"Moving forward 2.0"

When: 12 October 2023 – 02 September 2024

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: WSG University in Bydgoszcz

Aim: To contribute to the development of skills and competences among young people while bringing changes in different areas such as international affairs, design studio (marketing department), nursery and photography.

Volunteer Name: Emilya Nikoghosyan

Description: To support the team with organization of integrative, cultural and entertainment events for international students, to prepare posters and leaflets on ESC programme, to organize photo exhibitions and various workshops at the photo studio.

«Բացահայտի՛ր աշխարհը, բացահայտի՛ր քեզ 2023»

Երբ. 01 սեպտեմբերի 2023 թ. – 28 մայիսի 2024 թ.

Որտեղ. Ռիգա, Լատվիա

Հյուրընկալող կազմակերպություն. Kulturas biedriba «ALTERNATIVA REALITATE»

Նպատակ. Նպաստել երիտասարդների միջմշակութային իրազեկվածության բարձրացմանը ոչ-ֆորմալ կրթական գործունեության, մի շարք մշակութային միջոցառումների և աշխատարանների կազմակերպման միջոցով:

Կամավորի անունը. Աշոտ Ավետիսյան

Նկարագրություն. Նախապատրաստել և անցկացնել մշակութային միջոցառումներ, դպրոցական այցեր, տեղի համայնքի և հյուրընկալող կազմակերպության կարիքներից բխող տարբեր կամավորական աշխատանքներ, աջակցել Էրազմուս+ և ԵՀԿ տարբեր ծրագրերի իրականացման գործում:

«Կանաչապատիր քո համայնքը 2»

Երբ. 01 սեպտեմբերի 2023 թ. – 31 օգոստոսի 2024 թ.

Որտեղ. Տրամոնտի, Իտալիա

Հյուրընկալող կազմակերպություն. Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Նպատակ. Միանալ տեղական համայնքին, իրականացնել կայուն զարգացմանն ուղղված գործունեություն, ինչպես նաև բարելավել լեզվական կարողությունները և ստեղծել եվրոպական համագործակցության ցանց:

Կամավորի անունը. Արման Ստեփանյան

Նկարագրություն. Իրականացնել տարաբնույթ աշխատարաններ, դասընթացներ տեղացիների համար՝ կայուն և համաչափ ապրելակերպի վերաբերյալ, երիտասարդների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ, ինչպես նաև համատեղ ուժերով զբաղվել հարակից կանաչապատ տարածքների մաքրությամբ և հանդես գալ սեփական նախաձեռնություններով:

“Explore the world - Explore yourself 2023”

When: 01 September 2023 - 28 May 2024

Where: Riga, Latvia

Hosting organization: Kulturas biedriba “ALTERNATIVA REALITATE”

Aim: To promote the intercultural awareness of young people through non-formal activities and organization of different cultural events and workshops.

Volunteer Name: Ashot Avetisyan

Description: To prepare and organize cultural events, school visits, volunteering activities based on the needs of the local community and hosting organization, leading activities, help in implementation in different Erasmus+ and ESC projects.

“GREEN UP YOUR COMMUNITY 2”

When: 01 September 2023 - 31 August 2024

Where: Tramonti, Italy

Hosting organization: Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Aim: To join the local community, carry out sustainable development activities, as well as improve language skills and build a European network.

Volunteer Name: Arman Stepanyan

Description: To implement various workshops, trainings for the locals about sustainable and green way of life, to teach the English language to the youngsters, as well as to be engaged in the cleaning activities of adjacent green areas together and implement own initiatives.

«PRODIS»

Երբ. 14 սեպտեմբերի 2023 թ. – 14 օգոստոսի 2024 թ.

Որտեղ. Տեռասա, Իսպանիա

Հյուրընկալող կազմակերպություն. La Vibria Intercultural

Նպատակ. Նպաստել երիտասարդների մոտ ակտիվ քաղաքացիության ձևավորմանը, ապահովել միջմշակութային ուսուցում:

Կամավորի անունը. Կարեն Միքայելյան

Նկարագրություն. Աշխատել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, կազմակերպել վերջիններիս զբաղվածությունը, իրականացնել տարաբնույթ աշխատարաններ և տարբեր միջոցառումներ:

«Սպորտը և առողջ ապրելակերպը մանկապարտեզում»

Երբ. 06 մարտի 2023 թ. - 05 մարտի 2024 թ.

Որտեղ. Պոտսդամ, Գերմանիա

Հյուրընկալող կազմակերպություն. Kindergarten “König skinder”

Նպատակ. Նպաստել երիտասարդների մոտ ակտիվ քաղաքացիության, նոր հմտությունների և կարողությունների ձևավորմանը, ապահովել միջմշակութային ուսուցում:

Կամավորի անունը. Մերի Հովհաննիսյան

Նկարագրություն. Աջակցել մանկապարտեզում սպորտային և առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումների և խաղերի կազմակերպման գործընթացին, կազմակերպել մշակութային միջոցառումներ, հանդես գալ սեփական նախաձեռնություններով:

“PRODIS”

When: 14 September 2023 - 14 August 2024

Where: Terrassa, Spain

Hosting organization: La Vibria Intercultural

Aim: To contribute to the development of active citizenship and ensure intercultural learning.

Volunteer Name: Karen Mikayelyan

Description: To work mainly with people with special needs, organize their free time, implement various workshops and events.

“Sport and health-oriented kindergarten”

When: 06 March 2023 - 05 March 2024

Where: Potsdam, Germany

Hosting organization: Kindergarten “Königskinder”

Aim: To contribute to the development of active citizenship, new skills and abilities among youngsters and ensure intercultural learning.

Volunteer Name: Meri Hovhannisyan

Description: To assist in organization of sport and health-oriented events and games in the kindergarden, to organize cultural activities, to initiate own ideas and projects.

«Մարդասիրական կամավորություն»
“Humanitarian Aid Volunteering”

Նկարագրություն. «Մարդասիրական կամավորություն» ծրագիրն իրականացվում է Եվրամիության Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը հնարավորություն է տալիս 18-ից 35 տարեկան երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ հասարակության զարգացման մեջ՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ կամավորական գործունեության միջոցով, որոնք ուղղված են կարիքավոր մարդկանց կենսապայմանների բարելավմանը:

Այս ծրագրերը պետք է համահունչ լինեն մարդասիրական օգնության՝ մարդասիրության, չեզոքության, անկողմնակալության և անկախության սկզբունքներին, ինչպես նաև «մի վնասիր» սկզբունքին:

«Համայնքների հզորացում՝ կարողությունների զարգացման միջոցով»

Երբ. 21 սեպտեմբերի 2023 թ. – 19 սեպտեմբերի 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը, նպաստել կազմակերպության կազմակերպական և աշխատակազմի կարողությունների զարգացմանը:

Կամավորի անունը. Ինգրիդ Ունանդեր-Սկարին (Շվեդիա)

Նկարագրություն. «Համայնքների հզորացում՝ կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում կամավորը ներգրավվել է կազմակերպության ծրագրային թիմում՝ աջակցելով նոր գաղափարների և ծրագրերի մշակման գործընթացին: Կազմակերպության կազմակերպական զարգացման և աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով կամավորի կողմից ծրագրի շրջանակներում նաև մշակվում են ֆոնդահայթհայթման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև ծրագրերի մշակման կանոնակարգեր:

Description: Humanitarian Aid Volunteering is a volunteering programme in the frames of European Solidarity Corps programme of EU.

The programme gives an opportunity to young people aged 18 to 35 years old to contribute to society by short-term or long-term volunteering activities aimed at improving living conditions of people in need.

These projects must be in line with the humanitarian aid principles of humanity, neutrality, impartiality and independence, as well as with the ‘do no harm’ principle.

“ECSD - Empowering Communities through Skills Development”

When: 21 September 2023 – 19 September 2024

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism, to contribute to the organizational development and staff capacity building of the organization.

Volunteer Name: Ingrid Unander-Scharin (Sweden)

Description: In the frames of the project “ECSD - Empowering Communities through Skills Development” the volunteer was involved in the programmatic team of the organization thus contributing to the development of new projects and ideas. The volunteer also supports the development of regulations and manuals for project development and management, monitoring and evaluation as well as mapping fundraising sources to ensure the organizational development and capacity building of the organization.

«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց 3»
“EU4Youth Alumni Network 3”

Երբ. նոյեմբեր 2022 թ. - հուլիս 2023 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Մոբիլիզացնել և պահպանել ԵՄ տարբեր երիտասարդական ծրագրերին մասնակցած երիտասարդների ոգևորությունը և մոտիվացիան, վերջիններիս կապել իրենց համայնքների սահմանափակ հնարավորություններով երիտասարդների հետ՝ նրանց ակտիվացնելու և ԵՄ շարժունակության տարբեր ծրագրերում ներգրավելու նպատակով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում համակարգում է «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց»-ի հայաստանյան ծրագրի երրորդ փուլը, որն իրականացվում է «EU4Youth Coordination and Support»-ի կողմից՝ Արևելյան գործընկերության 5 երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա):
«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» ծրագիրը համախմբում է 90 երիտասարդների Արևելյան գործընկերության երկրներից (յուրաքանչյուր երկրից 15 ներկայացուցիչ), ովքեր իրենց հերթին աշխատում են տեղի երիտասարդների և դեռահասների հետ՝ ուղղորդելով վերջիններիս և իրականացնելով տեղական համայնքային նախաձեռնություններ:
2023 թվականի ընթացքում ցանցի անդամներն իրականացրել են երիտասարդների կարողությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ոչ-ֆորմալ կրթությանը, քաղաքացիական ակտիվության խթանմանը, փափուկ և լեզվական հմտությունների զարգացմանն ուղղված տարբեր նախաձեռնություններ Գյումրի, Արթիկ, Ոսկեհատ, Եղվարդ, Աբովյան, Սպիտակ, Էջմիածին, Օշական, Արտամետ, Տալվորիկ, Մյասնիկյան համայնքներում և Երևանում:

When: November 2022 – July 2023

Where: Armenia

Aim: To sustain and mobilize the enthusiasm and voluntary spirit of young people generated during their participation in the above-mentioned EU projects and programmes. It offers Alumni the opportunity to connect with disadvantaged young people in their countries and support them to become more active in their communities and actively participate in EU mobility programmes.

Description: “Youth Initiative Centre” NGO in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia coordinates the “EU4Youth Alumni network” third edition of the Armenian project. The project is implemented by EU4Youth Coordination and Support in 5 Eastern Partnership countries (Armenia, Azerbaijan, Moldova, Georgia, Ukraine).
“EU4Youth Alumni network” unites 90 young people from Eastern Partnership countries (15 from each country) who in their turn work with local adolescents and youngsters guiding them to implement local community initiatives.
During 2023 the alumni implemented various initiatives aimed at youth capacity building, professional orientation, non-formal education, civic activism, development of language and soft skills in Gyumri, Artik, Voskehat, Yeghvard, Abovyan, Spitak, Ejmiatsin, Oshakan, Artamet, Talvorik, Myasnikyan communities and in Yerevan.

Աշխատանքային և ուսումնական պրակտիկա
Work and study internship

Երբ. հունվար-դեկտեմբեր 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն աշխատանքային և ուսումնական պրակտիկայի հնարավորություն է ընձեռում երիտասարդներին՝ նպատակ ունենալով ծանոթացնել երիտասարդական աշխատանքին և տեսակներին (որպես սոցիալական աշխատանքի հարակից մասնագիտություն), ինչպես նաև գրասենյակային աշխատանքին և դրա գործիքակազմին:
Աշխատանքային և ուսումնական պրակտիկաների անցկացման համար համագործակցություն է եղել Ծիրակի պետական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հետ:

Ուսումնական պրակտիկա. 2023 թվականի ընթացքում ԵՆԿ գրասենյակում և ԵՆԿ-ի «Գյումրու Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում ուսումնական պրակտիկա է անցել 25 ուսանող:

Աշխատանքային պրակտիկա. 2023 թվականի ընթացքում ԵՆԿ գրասենյակում և ԵՆԿ-ի բաց երիտասարդական կենտրոններում (Գյումրի, Սպիտակ, Էջմիածին, Արմավիր և Գավառ) աշխատանքային պրակտիկա է անցել 10 երիտասարդ:

When: January-December 2023

Where: Gyumri, Armenia

Description: "Youth Initiative Centre" NGO offers work and educational internship opportunities for young people, aiming to familiarize them with youth work and its various aspects (as a related profession to social work), as well as office work and its toolkit.
YIC has collaborated with Shirak State University and the Gyumri branch of Armenia State University of Economics for the mentioned internships.

Educational internship: During 2023, 25 students had internships at the office of YIC and the “Gyumri Youth House” open youth centre.

Work internship: During 2023, 10 young people had work internships at YIC office and the YIC open youth centres (Gyumri, Spitak, Ejmiatsin, Armavir and Gavar).

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր

Youth in Action: Youth Empowerment and Leadership Development in Armenia

«Քաղաքացիական կրթության գործիքների, պրակտիկաների քարտեզագրում և ուսումնասիրություն» հետազոտություն

Երբ. հոկտեմբեր 2023 թ. - մարտ 2024 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Ուսումնասիրությունը նպատակ ուներ հնարավորինս քարտեզագրել ու բացահայտել Հայաստանում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու առաջնորդության հմտությունների զարգացմանն ուղղված գործիքների կիրառման բացերը, թերությունները և հնարավորությունները:

Նկարագրություն. Ուսումնասիրության համար կիրառվել է խառը մեթոդներով հետազոտությունը, մասնավորապես՝ համաժամանակյա հետազոտական մեթոդաբանությունը: Գրասենյակային հետազոտության ընթացքում հնարավորինս ուսումնասիրվել ու քարտեզագրվել են Հայաստանում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու առաջնորդական հմտությունների զարգացմանն ուղղված տարբեր գործիքներ, այդ թվում՝ հարթակներ, ձեռնարկներ, մոդուլներ, գրքեր/գրականություն, թվային հավելվածներ: Փաստաթղթերի վերլուծության միջոցով զուգահեռ ուսումնասիրվել են հնարավոր թեմատիկ աղբյուրները (ուսումնասիրություններ, երկրորդային վերլուծություններ, վիճակագրական տվյալներ, ֆինանսական ռեսուրսների ուսումնասիրություններ, ոլորտային իրավական փաստաթղթեր): Որակական ուսումնասիրության ընթացքում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ և փորձագիտական խորքային հարցազրույցներ 70 դերակատարի ներգրավմամբ, մասնավորապես՝ հանրային և մասնավոր կրթական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ, երիտասարդական աշխատողներ, երիտասարդներ (16-ից 30 տարեկան): Ուսումնասիրությունը հիմք է հանդիսացել ծրագրի շրջանակներում հաջորդող գործողության՝ «Քաղաքացիական կրթության նորարարական գործիքների մշակման ենթադրամաշնորհի» համար՝ հնարավորություն տալով սահմանել ենթադրամաշնորհային մրցույթի ուղղություններն ու առաջնահերթությունները:

Mapping and gap analysis of Civic Education Tools and Practices

When: October 2023 - March 2024

Where: Armenia

Aim: The aim of the study was to map and identify the gaps, shortcomings and opportunities in the use of tools aimed at increasing civic activity and developing leadership skills of young people in Armenia.

Description: Research mixed methods, namely, concurrent research methodology, was used for the study. During the office-based research, various tools aimed at increasing civic activism and developing leadership skills of youth in Armenia were studied and mapped, including: platforms, manuals, modules, books/literature, digital applications. Possible thematic sources (studies, secondary analyses, statistical data, studies of financial resources, sectoral legal documents) were simultaneously studied through the analysis of documents. During the qualitative study, focus group discussions and in-depth expert interviews were conducted with the involvement of 70 actors, namely: representatives of public and private educational institutions, civil society structures, independent experts, youth workers, and young people (16 to 30 years old).
The study served as a basis for the next action within the project subgranting activity "Development of Innovative Civic Education Tools for Non-Formal Learning", providing the framework to define the directions and priorities of the sub-grant competition.

«Համայնքային կազմակերպիչների կարողությունների զարգացման դասընթաց»

Երբ. 23-27 հունիսի 2023 թ.

Որտեղ. Արմավիր, Վաղարշապատ

Նպատակ. Դասընթացը նպատակ ուներ ստեղծել կապեր երիտասարդ համայնքային կազմակերպիչների միջև՝ նպաստելով երիտասարդության և հասարակության խնդիրների ավելի խորը ըմբռնմանը:

Նկարագրություն. «Համայնքային կազմակերպիչների կարողությունների զարգացման» դասընթացին մասնակցում էին 16-25 տարեկան 40 երիտասարդներ Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից: Քառօրյա դասընթացի ընթացքում մասնակիցները ակտիվորեն ներգրավվեցին ինտերակտիվ վարժություններում, կատարելագործեցին հաղորդակցման և քննադատական մտածողության հմտությունները, ուսումնասիրեցին նախագծերի շրջափուլերը և ոչ ֆորմալ կրթության տեսակները: Նրանք նաև որպես համայնքային կազմակերպիչներ իրենց աջակցությունը կցուցաբերեն ծրագրային տարբեր գործողություններում, օրինակ՝ առաջնորդության դպրոցները, ճամբարները, մեդիա արշավները և ֆորումները:

"Capacity Building Training of Youth Multipliers"

When: 23-27 June 2023

Where: Armavir, Vagharshapat

Aim: The training aimed to create connections between young multipliers, contributing to a deeper understanding of youth and societal issues.

Description: 40 young people aged 16 to 25 from all regions of Armenia and Yerevan participated in the "Capacity building of youth multipliers" training. During the four-day training, participants actively engaged in interactive exercises, improved communication and critical thinking skills, explored project cycles and types of non-formal education. The multipliers will get engaged and support various project activities such as leadership schools, camps, media campaigns and forums.

«Աշխարհն առաջնորդող աղջիկները» առաջնորդության և հզորացման ծրագիր»

Երբ. 23 հոկտեմբերի 2023 թ. - 31 հունվարի 2024 թ.

Որտեղ. Տավուշ, Դիլիջան

Նպատակ. Ճամբարային և հետճամբարային նախագծերի իրականացման փուլից բաղկացած այս ծրագիրը նպատակ ուներ երիտասարդ աղջիկներին ապահովել հիմնական առաջնորդության հմտություններով՝ միաժամանակ ընդգծելով կանանց կարևոր դերը ղեկավար պաշտոններում:

Նկարագրություն. 7 օրվա ընթացքում կրթական ճամբարը համախմբել էր 13-15 տարեկան 40 դեռահաս աղջիկների Հայաստանի 10 մարզերից, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանվածներին: Հատուկ ուշադրություն դարձվեց ծրագրերի նախագծման և կառավարման հմտությունների զարգացմանը, որի արդյունքում ճամբարականների կողմից մշակվեց 10 համայնքային նախագիծ, որոնցից 9-ը կյանքի կոչվեցին 9 մարզերում ճամբարի ավարտից հետո՝ 2023 թ. նոյեմբերից: Նախագծերը կյանքի են կոչվել զրո ֆինանսական ներդրմամբ՝ ծրագրերի նախագծման և ղեկավարման համակարգողի օգնությամբ: Ճամբարի ողջ ընթացքում ճամբարականները աջակցություն են ստացել 16-18 տարեկան 4 կրտսեր և 19 տարեկանից բարձր 4 ավագ ջոկատավարների կողմից, վերջիններս անցել են վերապատրաստում հոկտեմբերի 23-29-ը տեղի ունեցած «Համայնքային կազմակերպիչների» դասընթացի արդյունքում:

"Girls Leading Our World (GLOW)" leadership and empowerment project"

When: 23 October 2023 - 31 January 2024

Where: Dilijan, Tavush

Aim: The project consisting of a camp and after camp community projects, aimed to provide these young girls with essential leadership skills while highlighting the crucial role of women in leadership positions.

Description: In seven days, the "Girls Leading Our World" (GLOW) educational camp brought together 40 teenage girls aged 13 to 15 from 10 regions of Armenia, including those forcibly displaced from Artsakh. Special attention was paid to the development of Project Design and Management (PDM) skills, as a result of which the campers developed 10 community projects, 9 of which were implemented after the camp starting from November 2023 in 9 regions of Armenia. The projects were implemented with zero-budget, with the help of PDM manager. Throughout the camp, the campers were supported by 4 junior 16-18 y/o and 4 senior 19 y/o counselors The latter were trained at the "Capacity building of youth multipliers" training held from October 23 to 29, 2023.

Կամավորների միջազգային օր 2023
International Volunteer Day 2023

Երբ. 5 դեկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. Դեկտեմբերի 5-ին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնի շրջանակներում, Իմփաքթ Հաբ Թեկնածու Գյումրիի հետ համագործակցությամբ իրականացրեց «Ես կամավոր եմ» խորագրով միջոցառում՝ նվիրված Կամավորների միջազգային օրվան:
Միջոցառման մեկնարկին Կամավորների միջազգային օրվա առթիվ շնորհավորական ուղերձով հանդես եկան ԵՆԿ խորհրդի նախագահ Արթուր Նաջարյանը և Իմփաքթ Հաբ Թեկնածու Գյումրիի գործառնական աշխատանքների ղեկավար Գայանե Ավետիսյանը:

Հաջորդիվ տեղի ունեցավ արդեն ավանդական դարձած կամավորների ամենամյա պարգևատրման արարողությունը «Տարվա կամավոր» անվանակարգում, որի ընթացքում կամավորներին հանձնվեցին շնորհակալագրեր և անվանական տիտղոսներ 2023 թ. ընթացքում կազմակերպության ծավալած գործունեության մեջ ունեցած ակտիվ ներգրավվածության և կամավորական աշխատանքների իրականացման համար: Տիտղոսները տրվեցին «Տարվա կամավոր», «Տարվա մենթոր», «Տարվա ԵՀԿ կամավոր» անվանակարգերում:
Մրցանակով պարգևատրվեց նաև «Իմ պատմությունը 100 վայրկյանում» տեսանյութերի մրցույթի հաղթող Դիանա Գրիգորյանը:

Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումն ամփոփվեց «Երիտասարդների աչքերով» խորագիրը կրող ֆոտոցուցահանդեսով, որի ընթացքում ներկայացված էին 2021-2023 թթ. ընթացքում Էրազմուս+ և/կամ Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերին մասնակցության փորձ ունեցող երիտասարդների հաջողությունների պատմությունները՝ լուսանկարների միջոցով:

When: 5 December 2023

Where: Gyumri, Armenia

Description: On the 5th of December “Youth Initiative Centre” NGO in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia and in cooperation with Impact Hub Candidate Gyumri organised an event entitled "I am a Volunteer" dedicated to the International Volunteer Day.

At the beginning of the event the president of YIC international board Artur Najaryan and operational manager of Impact Hub Candidate Gyumri Gayane Avetisyan delivered congratulatory speeches on the occasion of the international volunteer Day.

Afterwards, YIC annual volunteer awards ceremony under the title "Volunteer of the Year" took place, during which awards and certificates, as well as certificates of appreciation were given to all volunteers for their active involvement in the activities of the organisation and implementation of voluntary work in 2023. The titles were awarded in the following categories: "Volunteer of the Year", "Mentor of the Year", "ESC Volunteer of the Year'.
The winner of the video contest "My Story in 100 seconds" Diana Grigoryan was also awarded with a prize.

The event dedicated to the International Volunteer Day was summarised with a photo exhibition entitled "Through the eyes of YOUth". The photo exhibition reflected the stories and experiences of young people who participated in Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes.

«Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոն Հայաստանում

“Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia”

Երբ. 01 հունվարի – 31 դեկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն երիտասարդներին և երիտասարդական կառույցներին՝ Հայաստանում Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել շահագրգիռ կողմերին իրենց ծրագրերի իրականացման գործում:

Նկարագրություն. «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնների ցանցը ստեղծվել է 2017 թ., որը գործում է Արևելյան գործընկերության 5 երկրներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս): Այս երկրներից յուրաքանչյուրում կենտրոնների գործունեության համակարգման իրավասությունը մրցութային կարգով ստանձնում է տվյալ երկրի մեկ կազմակերպություն:

Հայաստանում տեղեկատվական կենտրոնի գործունեության համակարգման լիազորությունը արդեն յոթերորդ տարին է՝ հանձնվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին:

Տեղեկատվական կենտրոնի թիրախային խմբերն են երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական քաղաքականություն իրականացնողները և այլ ինստիտուցիոնալ, շահագրգիռ կողմերը:

Տեղեկատվական կենտրոնը տրամադրում է առցանց և հեռախոսային խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպում է տեղեկատվական օրեր, առերես հանդիպումներ և բաց դռների օրեր:

When: 1 January – 31 December 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To provide information on opportunities for young people and youth organizations within the “Erasmus+ Youth” and “European Solidarity Corps” programmes and support stakeholders in implementation of their projects.

Description: The Network of Info Centres for “Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes” has been established in 2017. The Info Centres are functioning in six Eastern Partnership countries (Armenia, Georgia, Azerbaijan, Ukraine, Moldova, Belarus).
The coordination of activities of the Info Centres is carried out by a single organization selected from each partner country on the basis of the open call.

“Youth Initiative Centre” (YIC) NGO is in charge of coordination of activities of the Info Centre in Armenia already in its seventh year.

The target groups of the Info Centre are young people, youth organizations, youth workers, youth policy makers and other institutional stakeholders.

The Info Centre provides online and phone consultancy, as well as organises face to face meetings, info days and open doors.

«Եվրոպան տեղայնացվում է»
“Europe Goes Local”

Երբ. օգոստոսի 2022 թ. - դեկտեմբերի 2027 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Արմավիր, Գեղարքունիք, Հայաստան

Նպատակ. Նպաստել եվրոպական ընդգրկուն ցանցի ստեղծմանը և միջազգային համագործակցության հաստատմանը Եվրոպական միության ու Արևելյան գործընկերության երկրների համայնքապետարանների, տեղական երիտասարդական հասարակական, հովանոցային կազմակերպությունների և անհատ փորձագետների միջև:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս Ռեսուրսային կենտրոնի հետ համատեղ, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում իրականացնում է Եվրոպական միության «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը ՀՀ տարբեր մարզերում:
«Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը ռազմավարական գործընկերություն է, որի մեջ ներկայումս ներգրավված են ՍԱԼՏՈ Ռեսուրսային կենտրոններ, Եվրամիության Էրազմուս+ ծրագրի 27 ազգային գործակալություններ և վերջիններիս շուրջ 200 համայնքային գործընկերները:
2021 թվականից «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը հասանելի է դարձել նաև Եվրամիությանը հարակից գործընկեր երկրների համար՝ ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների ներգրավմամբ՝ «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի տեղեկատվական կենտրոններ»-ի աջակցությամբ:
2022 թվականից Հայաստանից «Եվրոպան տեղայնացվում է» ցանցին են միացել Շիրակի, Լոռու, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի Գյումրի, Սպիտակ, Արմավիր, Էջմիածին, Խոյ և Գավառ համայնքների համայնքապետարանները:

When: August 2022 - December 2027

Where: Shirak, Lori, Armavir, Gegharkunik, Armenia

Aim: To contribute to the creation of the European network and development of international cooperation between the municipalities, youth NGOs, umbrella organizations and individual experts from the EU and Eastern Partnership countries.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre implements a long-term project of the EU “Europe Goes Local” in different regions of the RA in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.

“Europe Goes Local” is a strategic partnership which involves SALTO Resource Centres, 27 National Agencies of the European Union’s Erasmus+ programme and about 200 of their municipal partners.

Starting from 2021 “Europe Goes Local” project is available for partner countries neighboring the EU with the involvement of SALTO Resource Centres and assistance of the Info Centres for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes. Since 2022 from Armenia the municipalities of Gyumri, Spitak, Armavir, Ejmiatsin, Khoy and Gavar communities of Shirak, Lori, Armavir and Gegharkunik regions have joined the network.

«Եվրոպան տեղայնացվում է. Մենթորության ծրագիր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի համար»

“Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova”

Երբ. դեկտեմբերի 2022 թ. - դեկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Ծիրակ, Լոռի, Արմավիր, Գեղարքունիք, Հայաստան

Նպատակ. Զինել համայնքապետարանների ներկայացուցիչներին համապատասխան գիտելիքներով և փորձով՝ իրենց համայնքներում երիտասարդական աշխատանքի ռազմավարության մշակման, երիտասարդական ծրագրերի իրականացման և երիտասարդական աշխատանքի եվրոպական փորձի տեղայնացման նպատակով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս Ռեսուրսային կենտրոնի հետ համատեղ, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում իրականացնում է Եվրամիության «Եվրոպան տեղայնացվում է. Մենթորության ծրագիր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի համար» ծրագիրը: Հայաստանից ծրագրում ներգրավված են «Եվրոպան տեղայնացվում է» ծրագրի գործընկեր հանդիսացող Գյումրի, Արմավիր, Խոյ, Գավառ և Ալավերդի համայնքները:
2023 թվականի ընթացքում ծրագրում ներգրավված համայնքների ներկայացուցիչները մենթորի աջակցությամբ մշակել են իրենց աշխատանքային պլանները, մասնակցել կարողությունների զարգացման դասընթացների և ուսումնական այցերի Խորվաթիայում ու Վրաստանում:
Ծրագրի ավարտին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել ծրագրի ամփոփիչ հանդիպում, որի ընթացքում ծրագրում ներգրավված Ալավերդի, Արմավիր, Գավառ, Գյումրի և Խոյ համայնքների ներկայացուցիչները ոլորտային դերակատարներին են ներկայացրել «Մենթորության» նախագծի 2023 թ. շրջափուլի արդյունքները:
2024 թ. հունվարից մեկնարկում է ծրագրի երկրորդ փուլը:

When: December 2022 - December 2023

Where: Shirak, Lori, Armavir, Gegharkunik, Armenia

Aim: To equip municipality representatives with appropriate knowledge and experience to develop youth work strategies in their communities, implement youth projects in line with the European Youth Work Agenda and from the perspective of municipalities and of local youth work actors.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre implements a project of the EU “Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova” in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.
From Armenia Gyumri, Armavir, Khoy, Alaverdi and Gavar communities are involved in the project which are members of the “Europe Goes Local” network.
During 2023, the representatives of involved communities in the project developed their work plans with the support of the mentor, participated in capacity building trainings and study visits in Croatia and Georgia.
At the end of the project, a final meeting was held in the Ministry of Education, Science, Culture and Sports of RA during which the representatives of Alaverdi, Armavir, Gavar, Gyumri and Khoy communities presented the results of the "Mentorship" project in 2023 to the decision makers.
Starting from January 2024 the second phase of the project will be launched.

«Էրազմուս+» դասընթաց նորեկների համար
“Erasmus+ training for newcomers”

Երբ. 9 - 10 դեկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Երևան, Հայաստան

Նպատակ. Նպաստել Էրազմուս+ ծրագրերում ներգրավվել ցանկացող կազմակերպությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը՝ վերջիններիս հաղորդելով բազային գիտելիքներ ծրագրերի մշակման փուլերի և որակի համապատասխանելիության վերաբերյալ:

Նկարագրություն. Դեկտեմբերի 9-ին և 10-ին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնի շրջանակներում Երևանում անցկացրեց «Էրազմուս+» երկօրյա դասընթաց նորեկների համար:
Դասընթացի շրջանակներում ՀՀ տարբեր համայնքներից Էրազմուս+ ծրագրում ներգրավվել ցանկացող կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան բազային գիտելիքներ ստանալ ծրագրերի մշակման գործընթացում ներգրավվելու փուլերի, տարբեր ընթացակարգերի և որակի համապատասխանելիության վերաբերյալ:

When: 9 - 10 December 2023

Where: Yerevan, Armenia

Aim: To contribute to the capacity building of the representatives of organizations wishing to be involved in Erasmus+ programme by providing them with basic knowledge about the stages of project development and quality compliance.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre implements a project of the EU “Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova” in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.
From Armenia Gyumri, Armavir, Khoy, Alaverdi and Gavar communities are involved in the project which are members of the “Europe Goes Local” network.
During 2023, the representatives of involved communities in the project developed their work plans with the support of the mentor, participated in capacity building trainings and study visits in Croatia and Georgia.
At the end of the project, a final meeting was held in the Ministry of Education, Science, Culture and Sports of RA during which the representatives of Alaverdi, Armavir, Gavar, Gyumri and Khoy communities presented the results of the "Mentorship" project in 2023 to the decision makers.
Starting from January 2024 the second phase of the project will be launched.

ԵՀԿ համակարգողների հանդիպում
Meeting of ESC Coordinators

Երբ. 27 – 29 հոկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Հնարավորություն ստեղծել ԵՀԿ ծրագրում ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչներին կիսվել որակյալ ծրագրերի իրականացման, կամավորներին տրամադրվող աջակցության գործիքների կիրառման իրենց փորձով, ամրապնդել ԵՀԿ համակարգողների համայնքը և տեղեկանալ ծրագրային թարմացումներին:

Նկարագրություն. Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնը, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, հոկտեմբերի 27-29-ը Գյումրիում հյուրընկալեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի համակարգողների տարեկան հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցեցին Հայաստանի տարբեր համայնքներից ԵՀԿ Որակի հավաստագիր ունեցող տարբեր կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում մասնակիցները կիսվեցին կամավորների հետ աշխատանքի իրենց փորձով, խոսեցին առկա խնդիրներից և մարտահրավերներից: Վերջիններս հնարավորություն ունեցան նաև ՍԱԼՏՈ Եվրոպական Համերաշխության Կորպուս Ռեսուրսային կենտրոնի ներկայացուցիչների հետ առցանց հանդիպման ընթացքում տեղեկանալ ծրագրային թարմացումներին, առաջիկա հնարավորություններին: Ինչպես նաև ԵՀԿ ծրագրի Որակի հավաստագրի փորձագետի կողմից ներկայացվեց Որակի հավաստագրի դիմելու ընթացակարգերը, գնահատման չափանիշներն ու որակի ստանդարտները:

When: 27 – 29 October 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To provide an opportunity for the representatives of the organizations involved in ESC programme to share their experience in quality implementation of projects, usage of tools for volunteer support, to strengthen the community of ESC coordinators and learn about the programme updates.

Description: The Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia in cooperation with SALTO EECA and Youth Initiative Centre NGO hosted a 3-day meeting of ESC coordinators in Gyumri. The meeting was attended by 18 ESC coordinators from different communities of Armenia.
During the meeting the coordinators had a chance to share their experiences, discuss the problems and opportunities in implementation of ESC projects. They also had an opportunity to have an online session with the representatives of SALTO European Solidarity Corps Resource Centre and SALTO EECA to learn about the new updates of the programme and existing capacity development opportunities.
On the last day there was a session held by the QL expert during which the procedures, quality standards and the required documents were presented.

Ուսումնական այց Հայաստանում
Study visit to Armenia

Երբ. 16 – 20 հոկտեմբերի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Բարձրացնել երիտասարդական աշխատանքի իրականացման արդյունավետությունը՝ հայ-վիեննական փորձի փոխանակման, երիտասարդական աշխատանքում կիրառվող նոր մեթոդների և մոտեցումների բացահայտման, նոր համագործակցությունների հաստատման միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ավստրիական «WIENXTRA» երիտասարդական աշխատողների կրթական կենտրոնի հետ համատեղ, հոկտեմբերի 16-20-ը Հայաստանում հյուրընկալեց «Երիտասարդական աշխատանք» թեմայով միջազգային ուսումնական այցը: Այն հնարավորություն տվեց մասնակիցներին ծանոթանալու Հայաստանում երիտասարդական աշխատանքի իրավիճակին, գործող և երիտասարդների հետ աշխատանք իրականացնող պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև ծանոթանալու երիտասարդական աշխատանքում կիրառվող մեթոդներին և լավագույն փորձին, հաստատելու նոր համագործակցություններ և սկիզբ դնելու նոր գաղափարների ու ծրագրերի:
Ծրագրին մասնակցում էին համապատասխան ոլորտի (համայնքապետարաններ, ուսումնական հաստատություններ, երիտասարդական կենտրոններ, երիտասարդական հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ) 11 փորձագետներ Վիեննայից:

When: 16 – 20 October 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To increase the efficiency of youth work through exchange of Armenian-Viennese experience, discovering new methods and approaches in youth work, providing space for networking and future collaboration.

Description: "Youth Initiative Centre" NGO (Armenia) in cooperation with "WIENXTRA" Institute for leisure time pedagogy (Austria) hosted a 5-day international study visit in the youth field from 16th to 20th of October, 2023 in Armenia. The study visit gave an opportunity to the participants to get to know the activities of various state and non-governmental organizations operating in Armenia and working with youth, as well as to learn about youth work situation in Armenia, discover the best practices and methods used in youth work, to establish new partnerships and to develop new ideas and projects.
11 professional youth workers from relevant sectors (municipalities, educational institutions, youth centres, youth organizations, foundations) from Vienna, Austria participated in the study visit.

«Խաղաղության կորպուս»
“Peace Corps”

Երբ. մայիս 2023 թ. - մայիս 2025 թ.

Որտեղ. Սպիտակ, Հայաստան

Նպատակ. Նպաստել «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Հարրի Փիրսոն (ԱՄՆ)

Նկարագրություն. Իրականացնել ոչ-ֆորմալ կրթական ակումբներ, աջակցել երիտասարդական նախաձեռնություններին, կենտրոնի կազմակերպական զարգացմանը, ծրագրերի նախագծմանը և իրականացմանը, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը և ապահովել կենտրոնի գործունեության տեսանելիությունը սոցիալական հարթակներում:

When: May 2023 - May 2025

Where: Spitak, Armenia

Aim: To ensure organizational development of “Spitak Youth House” open youth centre and youth empowerment.

Volunteer Name: Harry Pearson (USA)

Description: To plan and run non-formal educational clubs, assist in the organizational development of the youth centre, youth initiatives and project writing and implementation phase, develop language skills of young people and ensure visibility of the youth centre’s activities on social media platforms.

Երբ. մայիս 2023 թ. - մայիս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել կազմակերպության կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Մարկ Քլենսի (ԱՄՆ)

Նկարագրություն. Աջակցել կազմակերպական զարգացմանը, ծրագրերի նախագծմանը և իրականացմանը, ներգրավվել կազմակերպության ընթացիկ ծրագրերում, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը:

When: May 2023 - May 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To ensure organizational development and youth empowerment.

Volunteer Name: Marc Clancy (USA)

Description: To assist in the organizational development, project writing and implementation phase, get involved in on-going projects of the organization and develop language skills of young people.

«Խոսում են երիտասարդները» մեդիա նախագիծ
“Have Your Say” youth media programme

Երբ. 01 հունվարի - 30 նոյեմբերի 2023 թ.

Որտեղ. ՀՀ բոլոր մարզեր

Նպատակ. Ծրագրի նպատակն էր բարձրացնել երիտասարդների դերը հասարակության մեջ և դարձնել իրենց ձայնը լսելի՝ երիտասարդության խնդիրների ու երիտասարդական նախաձեռնությունների անաչառ լուսաբանման միջոցով:

Նկարագրություն. Ծրագրի շրջանակներում բաց հայտարարության միջոցով ընտրվել են 15 երիտասարդներ Շիրակի մարզից, ովքեր անցել են վերապատրաստման կուրս լրագրության, մեդիա և թվային գրագիտության, սոցիալական մեդիա մարկետինգի, հանրային կապերի, երիտասարդական աշխատանքի և երիտասարդական քաղաքականության ոլորտներում, ընդհանուր՝ 14 դասընթաց: Վերապատրաստումներն անցկացրել են ոլորտի փորձառու մասնագետները:

Դասընթացների հաջող ավարտից հետո վերապատրաստված երիտասարդ լրագրողները, շրջելով ՀՀ բոլոր մարզերով, պատրաստել են 10 մասից բաղկացած «Խոսում են երիտասարդները» հաղորդաշարը, որը եթեր է հեռարձակվել ԵՆԿ պաշտոնական յութուբյան ալիքով և «ՑԱՅԳ» մարզային հեռուստաալիքով: Հաղորդաշարը հնարավոր է դիտել հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=ESdcE-Nb69w&list=PL6n4-giavzBztdKS83lcaDzGk608xQXi_8:

Նկարահանումներին զուգահեռ սոցիալական ցանցերում իրականացվել է արշավ #HaveYourSay_am, #ԽոսումենԵրիտասարդները կարգախոսով, որի միջոցով ոչ միայն լուսաբանվել, այլ նաև բարձրաձայնվել են մարզերում երիտասարդների կողմից արձանագրված խնդիրներն ու տարածվել են առկա հնարավորությունները:
Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև կարողությունների զարգացման դասընթաց երիտասարդական քաղաքականություն, երիտասարդների մասնակցություն և երիտասարդական աշխատանք թեմաներով՝ ՀՀ 8 մարզերից և Երևանից 23 լրագրողների, համայնքապետարանների մամուլի քարտուղարների և ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ: Դասընթացի նպատակն էր՝ խթանել լրատվական դաշտում երիտասարդության հարցերի օրակարգի կարևորումը և արհեստավարժ լուսաբանումը:
Դասընթացին հաջորդող չորս ամիսների ընթացքում վերապատրաստված մասնակիցների կողմից պատրաստվել և հրապարակվել է 55 լրագրողական նյութ՝ մարզային երիտասարդության հարցերի և նախաձեռնությունների վերաբերյալ:

When: 01 January - 30 November 2023

Where: All regions of Armenia

Aim: The project aimed at increasing the role of youth as active citizens of Armenia by giving young people a voice and promoting impartial and wider coverage of youth issues and youth initiatives throughout the country.

Description: Within the framework of the programme, 15 young people from Shirak region who were recruited via open call, completed a series of training courses in the fields of journalism, media and digital literacy, social media marketing, public relations, youth work and youth policy - a total of 14 courses. The trainings were conducted by outstanding specialists of the field.

After the successful completion of the training cycle, the trained young journalists, touring all regions of Armenia, prepared 10 episodes under the title “Have Your Say”. The programme was broadcasted on the YouTube channel of YIC and the regional TV channel "TSAYG". The episodes can be viewed at the following link: https://www.youtube.com/watch?v=ESdcE-Nb69w&list=PL6n4-giavzBztdKS83lcaDzGk608xQXi_8.

Along with the filming of the episodes, a campaign was carried out on social media with the slogan #HaveYourSay_am and #ԽոսումենԵրիտասարդները covering the problems raised by young people in the regions, as well as spreading the available opportunities.

Within the framework of the project, a capacity building training course was conducted on the topics of youth policy, youth participation and youth work, with the participation of 23 journalists, press secretaries of municipalities and representatives of the Ministry of Education, Science, Culture and Sport. Participants were from Yerevan and 8 other regions of Armenia.
The aim of the training was to highlight the importance of youth agenda in media and promote professional coverage of youth issues.
In the following four months after the training the participants prepared and published 55 journalistic pieces on regional youth issues and initiatives.

Երիտասարդական աշխատողների և տեղական կազմակերպությունների հիմնարար հմտությունների զարգացում

Capacity Building of Community Youth Workers and Local NGOs in essential Life-Saving Skills

Երբ. 01 դեկտեմբերի 2023 թ. - 15 մայիսի 2024 թ.

Որտեղ. ՀՀ 10 մարզեր և Երևան

Նպատակ. Զարգացնել երիտասարդական աշխատողների և երիտասարդների հետ աշխատող այլ մասնագետների՝

- դեռահասներին և երիտասարդներին արդյունավետ կերպով համայնքային կյանքին ներգրավելու հմտությունները,
- հոգեկան առողջության, հուզական կարգավորման, սթրեսի կառավարման, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների հմտությունները,
- հաշմանդամություն ունեցող երիտասարդներին արդյունավետ ներգրավելու և աջակցելու հմտությունները երիտասարդական աշխատանքի համատեքստում:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպությունը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ԱՄՆ միջազգային գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացնելու է «Երիտասարդական աշխատողների և տեղական կազմակերպությունների հիմնարար հմտությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում տեղի է ունենալու եռօրյա վերապատրաստումների շարք՝ երկու բաղադրիչներով:

When: 01 December 2023 - 15 May 2024

Where: 10 regions of RA and Yerevan

Aim: Develop the following skills of the youth workers and other professionals working with young people:

- Effectively engage adolescents and youngsters in community life;
- Mental health, emotional regulation, stress management, and interpersonal skills;
- Effectively involve and support youngsters with disabilities in the context of youth work.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO, together with UNICEF Armenia, with the support of the US International Agency (USAID), will implement the "Development of basic skills of youth workers and local organizations" project. A series of three-day training sessions with two components will take place within the framework of the project.



ԲԱՂԱԴՐԻՉ 1: «Երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացում»

Նպատակաուղղված համայնքային երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացմանը՝ կյանքի հիմնարար հմտությունների տարրերով:

Վերապատրաստման թեմաներն են՝

- «Երիտասարդական աշխատանքի ներածություն», «Երիտասարդական աշխատանքի տեսակներ և երիտասարդական աշխատողի ունակություններ»,
- «Հոգեկան առողջություն», «Իրազեկում հոգեբանական աջակցության մասին», «Հուզական կարգավորում, սթրեսի կառավարում», «Միջանձնային հարաբերություններ»,
- «Ի՞նչ է հաշմանդամությունը, հաշմանդամության մոդելներ և հաշմանդամության հիմքով խտրականություն», «Արդյունավետ հաղորդակցություն, հաղորդակցության հիմնական նկատառումներ և նախընտրելի լեզու»:

ԲԱՂԱԴՐԻՉ 2: «Երիտասարդների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ու պետական հաստատությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացում»

Նպատակաուղղված տարածաշրջանային երիտասարդական քաղաքացիական-հասարակական կազմակերպությունների և ոլորտի հիմնահարցերով զբաղվող պետական հաստատությունների դերակատարների, այդ թվում՝ կամավորների կարողությունների հզորացմանը:

Վերապատրաստման թեմաներն են՝

- «Երիտասարդական աշխատանքի ներածություն», «Երիտասարդական աշխատանքի տեսակներ և երիտասարդական աշխատողի ունակություններ», «Ոչ-ֆորմալ կրթության ներածություն», «Ոչ-ֆորմալ ուսուցման գործիքների մշակում և կիրառում», «Աուտրիչ աշխատանք»,
- «Հոգեկան առողջություն: Հոգեկան առողջության բաղադրիչներ», «Դեռահասության տարիքում հոգեկան դժվարությունների ճանաչում և ուղղորդում»,
- «Հաշմանդամության ներառում: Արդյունավետ հաղորդակցություն և էթիկա»:

COMPONENT 1: "Capacity development of youth workers"

The aim is the development of community youth workers in essential life-saving skills.

The topics of the trainings are:

- "Introduction to youth work", "Types of youth work and abilities of a youth worker",
- "Mental health", "Information about psychological support", "Emotional regulation, stress management", "Interpersonal relations",
- "What is disability, models of disability and discrimination on the basis of disability", "Effective communication, main considerations of communication and preferred language".

COMPONENT 2: "Capacity development of representatives of non-governmental organizations and state institutions dealing with youth issues"

The aim is to strengthen the capacities of regional youth CSOs and local actors, including volunteers.

The topics of the trainings are:

- "Introduction to youth work", "Types of youth work and abilities of youth workers", "Introduction to non-formal education", "Development and application of non-formal learning tools", "Outreach work",
- "Mental health. Components of mental health", "Recognition and guidance of mental difficulties in adolescence",
- “Disability Inclusion. Effective communication and ethics".

«Կյանքը շարժունակության ծրագրերից հետո» միջազգային դասընթաց

"Life After Mobility Projects" International Training Course

Երբ. 20 – 27 նոյեմբերի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Բարելավել ոչ-ֆորմալ կրթության ոլորտում իրականացվող շարժունակության ծրագրերի որակը, ամրապնդել դրանց ազդեցությունը երիտասարդների աշխատունակության վրա՝ զինելով երիտասարդական աշխատողներին, երիտասարդ առաջնորդներին և մենթորներին՝ երիտասարդներին աջակցելու համապատասխան հմտություններով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, նորվեգական «Exploring Cultural campfire Opportunities (ECCO)» ՀԿ-ի հետ համատեղ, նոյեմբերի 20-27-ը Եվրամիության «Էրազմուս +» ծրագրի շրջանակներում Հայաստանում հյուրընկալեց «Կյանքը շարժունակության ծրագրերից հետո» թեմայով միջազգային դասընթացը:
Ծրագրին մասնակցում էին երիտասարդական ոլորտի 25 ներկայացուցիչներ Հայաստանից, Նորվեգիայից, Լիտվայից, Բուլղարիայից, Իսրայելից, Ուկրաինայից, Մոլդովայից, Իտալիայից, Վրաստանից, Սլովակիայից և Ֆրանսիայից, ովքեր ծանոթացան ոչ-ֆորմալ կրթության ոլորտում իրականացվող շարժունակության ծրագրերի որակի բարելավմանն ուղղված գործիքակազմին, ուսումնական այցերով եղան Գյումրիում գործող տարբեր երիտասարդական կառույցներ՝ ծանոթանալու շարժունակության ծրագրերի նախկին մասնակիցների հաջողությունների պատմություններին:

When: 20 – 27 November 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To improve the quality of non-formal learning mobility programmes and strengthen their impact on young people's employability through equipping youth workers, youth leaders and mentors with tools and competences for designing efficient support systems to guide young people throughout their mobility experience (preparation, implementation and follow-up).

Description: "Youth Initiative Centre" NGO in cooperation with "Exploring Cultural campfire Opportunities (ECCO)" (Norway) hosted a 7-day international training course "Life After Mobility Projects" in the framework of "Erasmus+" programme from 20th to 27th of November 2023 in Gyumri, Armenia.
The training course was attended by 25 representatives of youth field from Armenia, Norway, Lithuania, Bulgaria, Israel, Ukraine, Moldova, Italy, Georgia, Slovakia and France who learned about the tools for supporting and guiding young people's mobility experiences and quality of non-formal learning mobility programmes, had study visits to different youth organisations in Gyumri to get to know ex-participants for mobility projects and their success stories.

«Մենթորության արվեստը» ԵՀԿ մենթորների վերապատրաստման միջազգային դասընթաց

“The Art of Mentoring”
International Training Course for ESC Mentors

Երբ. 8 – 15 ապրիլի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Աջակցել Եվրոպական համերաշխության կորպուս (ԵՀԿ) ծրագրերում ներգրավված մենթորների գիտելիքների բարելավմանը՝ նպաստելով ԵՀԿ համակարգողների և մենթորների ներուժի զարգացմանը և ԵՀԿ ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև զինելու մենթորներին՝ ԵՀԿ կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներով, որոնք կօգնեն վերջիններիս լինել ավելի աշխատունակ:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, նորվեգական «Exploring Cultural campfire Opportunities (ECCO)» ՀԿ-ի հետ համատեղ, ապրիլի 8-15-ը Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Հայաստանում հյուրընկալեց «Մենթորության Արվեստը» թեմայով ԵՀԿ մենթորների վերապատրաստման 7-օրյա միջազգային դասընթացը:
Ծրագրի ընթացքում համախմբվեցին ԵՀԿ ծրագրերի համակարգողներ, մենթորներ և նախկին ԵԿԾ/ԵՀԿ կամավորներ, ովքեր ներկայացրին Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի իրականացման իրենց փորձը և ազգային առանձնահատկությունները:
Ծրագրի մասնակիցներն ուսումնական այցով եղան նաև ԵՆԿ գրասենյակում և «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամում, որի միջոցով հնարավորություն ունեցան բացահայտելու կազմակերպություններում առկա ԵՀԿ մենթորական համակարգերը, կիսվելու հաջողված փորձերով և հաստատելու համագործակցություն:
Որպես ամփոփում դասընթացի մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքներ, ծանոթացան ԵՀԿ կամավորների հետ արդյունավետ կերպով աշխատելու և ԵՀԿ ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նոր գործիքների և մեթոդների:
Դասընթացը համախմբել էր 27 մասնակիցների Հայաստանից, Նորվեգիայից, Հունաստանից, Բուլղարիայից, Հորդանանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Իտալիայից, Վրաստանից, Էստոնիայից և Ֆրանսիայից:

When: 8 – 15 April 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To empower European Solidarity Corps (ESC) mentors to increase the quality of ESC projects through developing capacities of ESC coordinators and mentors by equipping them with vital methods and tools to support and guide the volunteers towards the development of competences for future employment.

Description: “Youth Initiative Centre” NGO (Armenia) in cooperation with "Exploring Cultural campfire Opportunities (ECCO)" (Norway) hosted a 7-day international training course "The Art of Mentoring" on ESC mentorship in the framework of “Erasmus+” programme from 8th to 15th of April 2023 in Armenia.
The project brought together ESC coordinators, mentors and ex-EVS/ESC volunteers who presented their expertise in the implementation of European Solidarity Corps projects and national peculiarities.
The participants of the training course also had an opportunity to have a study visit to YIC office and “KASA” Swiss Humanitarian Foundation to get a closer look on ESC Mentoring system in the organization, to share good practices and set up partnership.
To conclude, the participants of the training course gained knowledge and acquired instrumental tools and methods to work productively with ESC Volunteers and manage European Solidarity Corps projects.
The training course brought together 27 representatives from Armenia, Norway, Greece, Bulgaria, Jordan, Ukraine, Moldova, Italy, Georgia, Estonia and France.

«Երիտասարդական ոլորտում միջոլորտային համագործակցության խթանում»միջազգային ուսումնական այց Հայաստանում

“Supporting of cross-sectorial cooperation in youth field” International study visit in Armenia

Երբ. 6 – 13 մայիսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Բարձրացնել երիտասարդական քաղաքականության մշակման և երիտասարդական աշխատանքի իրականացման արդյունավետությունը՝ պետական և ոչ պետական կառույցների միջոլորտային համագործակցության ու երիտասարդների մասնակցության խթանման միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, լեհական «FUNDACJA LAJA» հիմնադրամի հետ համատեղ, մայիսի 6-13-ը Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Հայաստանում հյուրընկալեց երիտասարդական քաղաքականություն, երիտասարդական աշխատանք և միջոլորտային համագործակցություն թեմաներով միջազգային ուսումնական այցը:
Ուսումնական այցը հնարավորություն տվեց մասնակիցներին ծանոթանալու Հայաստանում գործող և երիտասարդների հետ աշխատանք իրականացնող պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև միջոլորտային համագործակցության ծրագրերի լավագույն փորձին, ապահովելու մասնակիցների մասնագիտական աճը, հաստատելու նոր համագործակցություններ և սկիզբ դնելու նոր գաղափարների ու ծրագրերի:
Ծրագրին մասնակցում էին պետական (նախարարություններ, մարզպետարաններ, համայնքապետարաններ, ուսումնական հաստատություններ) և ոչ պետական (երիտասարդական հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ) կառույցների 29 ներկայացուցիչներ Հայաստանից, Լեհաստանից, Չեխիայից և Վրաստանից:

When: 6 – 13 May 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To increase the efficiency of youth work through promoting and raising capacities for cross-sectorial cooperation and youth participation as well as its implementation on different governmental and non-governmental levels and sectors working in the youth field.

Description: “Youth Initiative Centre” NGO (Armenia) in cooperation with "FUNDACJA LAJA" NGO (Poland) hosted a 7-day international study visit "Supporting of cross-sectorial cooperation in youth field" in the framework of “Erasmus+” programme from 6th to 13th of May, 2023 in Armenia.
The study visit gave an opportunity to the participants to get to know the activities of various state and non-governmental organizations operating in Armenia and working with youth, as well as to learn about the best practices of cross-sectoral cooperation, to ensure the professional growth of the participants, to establish new partnerships and to develop new ideas and projects.
29 representatives of state (ministries, regional administrations, municipalities, educational institutions) and non-governmental organizations (youth organizations, foundations) from Armenia, Poland, Czech Republic and Georgia participate in the study visit.

ԵՀԿ կամավորների տարեկան գնահատման հանդիպում
ESC Annual Volunteering Event

Երբ. 11 – 13 օգոստոսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Հնարավորություն ստեղծել ԵՀԿ նախկին կամավորներին գնահատել իրենց ԵՀԿ ծրագրերն ու իրենց փորձառությունը, տեղի երիտասարդների շրջանում տեղեկատվություն տարածել ԵՀԿ ծրագրերի վերաբերյալ:

Նկարագրություն. Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնը, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, Երիտասարդության միջազգային օրվա շրջանակներում օգոստոսի 11-13-ը Գյումրիում հյուրընկալեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի կամավորների տարեկան գնահատման հանդիպումը:

Գնահատման հանդիպմանը մասնակցեցին 20 երիտասարդներ Հայաստանի տարբեր համայնքներից, որի շրջանակներում մասնակիցները հնարավորություն ունեցան կիսվել իրենց միջազգային կամավորական աշխատանքի փորձով և անդրադառնալ համայնքում իրենց վերաինտեգրմանը:
Ավելի ուշ, Աբովյան փողոցում տեղադրված ԷՐԱԶՄՈՒՍ+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորոպուս ծրագրերի տեղեկատվական տաղավարում Գյումրիում հյուրընկալված Եվրամիության Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի տարեկան գնահատման հանդիպման մասնակիցների կողմից ներկայացվեց ԵՀԿ ծրագրի կողմից երիտասարդներին ընձեռվող հնարավորությունները:
Ծրագրի մասնակիցները անցկացրին խաղարկություն Եվրոպական Համերաշխության Կորոպուս ծրագրի թեմայով, որի արդյունքում 20 մասնակիցներից 10-ը ստացան մրցանակներ:

When: 11 – 13 August 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To evaluate and reflect on ESC projects of ex-volunteers and their volunteering experience, to promote European Solidarity Corps volunteering among local youth.

Description: The Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia in cooperation with SALTO EECA and Youth Initiative Centre NGO hosted a 3-day ESC Annual Volunteering Event in Gyumri in the frames of the International Youth Day. The meeting was attended by 20 young people from different communities of Armenia.
During the meeting the ex-volunteers had a chance to reflect on their international volunteering experience and speak about their reintegration into the community.

Later, during the promo event the participants of the ESC annual volunteering event introduced the ESC and Erasmus+ Youth opportunities provided to the young people from the Erasmus+ Youth and European Solidarity Corps Info Tent. They also held a quizz on ESC and 10 people out of 20 participants got prizes.

Երիտասարդության միջազգային օր 2023
International Youth Day 2023

Երբ. 12 օգոստոսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, շարունակելով երիտասարդության միջազգային օրը մեծ տոնախմբությամբ նշելու գեղեցիկ ավանդույթը, օգոստոսի 12-ին Գյումրիում իրականացրեց տարաբնույթ հանրային միջոցառումներ: Միջոցառումների մեկնարկը տրվեց հեծանվարշավով, որի նպատակն էր երիտասարդների շրջանում բնապահպանական և կանաչ հմտությունների ձևավորումը, առողջ ապրելակերպի խթանումն ու հասարակության մեջ վերջիններիս դերի բարձրացումը:

Երիտասարդության միջազգային օրվա շրջանակներում Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնը, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, օգոստոսի 11-13-ը Գյումրիում հյուրընկալեց նաև Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի կամավորների տարեկան գնահատման հանդիպումը:

Շարունակելով երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը՝ Գյումրիում հյուրընկալված մասնակիցների կողմից Աբովյան փողոցում ԷՐԱՍՄՈՒՍ+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորոպուս ծրագրերի տեղեկատվական տաղավարում ներկայացվեցին ԵՀԿ ծրագրի կողմից երիտասարդներին ընձեռվող հնարավորությունները, ինչպես նաև անցկացվեց Եվրոպական համերաշխության կորոպուս ծրագրի վերաբերյալ խաղարկություն, որի արդյունքում 20 մասնակիցներից 10-ը ստացան մրցանակներ:

Միջոցառումները եզրափակվեցին բացօթյա համերգով, որի ընթացքում ելույթ ունեցավ «ՄԵՆՔ Project»-ը, այնուհետև երեկոն շարունակեց DJ SAME-ը:

Միջոցառումն իրականացրեց «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն՝ ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (ՄԱԲՀ), Հայաստանում Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնի և Գյումրու համայնքապետարանի հետ համատեղ՝ Եվրամիության «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի տարեկան գնահատման հանդիպման շրջանակներում:

When: 12 August 2023

Where: Gyumri, Armenia

Description: "Youth Initiative Centre" NGO, continuing the beautiful tradition of celebrating International Youth Day with a big celebration, held various public events in Gyumri on the 12th of August.
The events started with a bike ride, the aim of which was the development of environmental and green skills among young people, the promotion of a healthy lifestyle and youth participation.

Within the framework of the International Youth Day, the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre and Youth Initiative Centre NGO, hosted the annual evaluation meeting of European Solidarity Corps volunteers 11 to 13 of August in Gyumri.

Continuing the series of events dedicated to the International Youth Day the opportunities provided by the European Solidarity Corps programme were presented to the young people by the participants of ESC annual volunteering event at the info tent for ERASMUS+ Youth and European Solidarity Corps programmes situated on Abovyan street. The participants of the ESC annual volunteering event also held a quiz on the European Solidarity Corps programme as a result of which 10 out of 20 participants received prizes.

Public events ended with an open-air concert, during which "MENQ Project" performed, then DJ SAME continued the evening with wonderful vibes.

The event was organized by "Youth Initiative Centre" NGO, SALTO Eastern Europe and Caucasus, UN Population Fund Armenia (UNFPA), Info Centre for “Erasmus+ Youth and European Solidarity Corps” Programmes in Armenia and the Gyumri Municipality, within the framework of EU programme “Alliance for Better City Governance” and “European Solidarity Corps Annual Volunteering Event”.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

YOUTH INITIATIVE CENTRE

yic.am

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3101, Հայաստան
26 Alek Manukyan
(+374) 95 91 91 97
yic@yic.am